№ 209 ԿԻՐԱԿԻ 21 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 1914 ԿԻՐԱԿԻ 21 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ № 209

ՔԱՌԱՍՈՒՆԵՐԵՔԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը և 7 ամսվանը 6 րուբլի. ամսական 85 կոպ.
Առանձին համարները ԱՄԷՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.
Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ»
Соломоновская ул., № 21.
Tiflis, Rédaction „Mschak“
Խմբագրատան տելեֆոն № 2—53.

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից)
Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզվով
Յայտարարութիւնների համար վճարվում են իւրաքանչիւր տողատեղին 20—10 կոպ.
Տպարանի տելեֆոն № 67.

ՄՇԱԿ
Հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ».
Соломоновская ул., № 21.
TIFLIS. Rédaction du journal «MSCHAK».

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ ՄԻՆՉԵՒ ՏԱՐՎԱՅ ՎԵՐՋԸ 3 ՌՈՒԲ.
Բաժանորդագրվել կարելի է իւրաքանչիւր ամսի 1-ից սկսած:
Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաև հին հասցէն և 40 կ. նամականիշ: ՀԻՆ ՀԱՍՑԷՆ և 40 կ. չուղարկողների խնդիրները՝ հասցէն փոխելու վերաբերմամբ ԿԸ ԹՈՂՆՎԵՆ ԱՆՀԵՏԵՒԱՆՔ:

Յայտարարութիւնների համար պէտք վճարել I երեսի վրա իւրաքանչիւր տողատեղին (պետիտ)—20 կ., IV երեսի վրա—10 կոպ.:
ՊԱՐՏՔՈՎ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

Սեպտեմբերի 17-ին, առաւօտեան ժամը 11-ին վախճանվեց
Սառա Իվանովնա ԹՈՒՄԱՆԵԱՆԸ,
որի մասին յայտնում է ազգականներին և ծանօթներին հանգուցեալի եղբայրը՝ Եգոր Իվանովիչ Փուլինեանը: Մարմնի յուղարկաւորութիւնը բնակարանից (Պասկեվիչի փողոց, № 12) այսօր, կիրակի, սեպտեմբերի 21-ին, առ. ժամը 10-ին դէպի Մողնու ս. Գէորգ եկեղեցին: Թաղումը Վերայի գերեզմանատանը:
887. 2—2

Սեպտեմբերի 17-ին, առաւօտեան ժամը 11-ին վախճանվեց
Սառա Իվանովնա ԹՈՒՄԱՆԵԱՆԸ,
որի մասին յայտնում են ազգականներին և ծանօթներին հանգուցեալի դուստրերը Օլգա Մինասովնա Կէպինովա՝ ամուսնու և զաւակների հետ, և Մարիամ Մինասովնա Ղարագեօզեան ու իր դուստրը, նոյնպէս և քրոջ դուստր Վարվառէ Իսահակովնա Ցովհաննիսեանը՝ ամուսնու և զաւակների հետ միասին: Մարմնի յուղարկաւորութիւնը բնակարանից (Պասկեվիչի փող. № 12) այսօր, կիրակի, սեպտեմբերի 21-ին, առաւօտեան ժամը 10-ին դէպի Մողնու ս. Գէորգ եկեղեցին: Թաղումը Վերայի գերեզմանատանը:
888. 2—2

Կովկասեան Քաղաքների Միութեան Բիւրոյի կողմից

Կովկասեան Քաղաքների Միութեան Բիւրօն հրաւիրում է բժիշկների, ֆէլդշէրների և ֆէլդշէրուհիների, որոնք կը ցանկանան պաշտօնավարել վիրաւոր զինւորների համար հիմնած ժամանակաւոր լազարէթներում, ուղարկել իրանց յայտարարութիւնները Թիֆլիսի Քաղաքային Ուպրավային՝ Կովկասեան Քաղաքների Միութեան լիազօր և Թիֆլիսի քաղաքագլուխ Ա. Ի. Խատիսեանի անունով: Վարձատրութեան և ծառայութեան այլ պայմանների մասին կարելի է տեղեկութիւն ստանալ Միութեան լիազօր Ա. Ի. Խատիսեանից, և կամ թէ Բիւրօյի քարտուղար Ս. Ա. Դանդուրովից՝ Թիֆլիսի Քաղաքային Ուպրավայում, առ. ժ. 11-ից մինչև ցեր. ժ. 2-ը:
առ. 882. 3—3

Ա./Տ. ԲՕԶԱՐՋԵԱՆՑ ԵՒ ՈՐԴԻՔ

ԾԽՈՂՆԵՐԻ ՈՒՇԱԴՐՈՒԹԵԱՆ

Աւետրականներին նուազ զեղչով տալը և ծխախոտի մեծ պաշար ունենալը մեզ կարելիութիւն են տալիս, չը նայած ակցիզային տուրքի յաւելման, պահպանել այն բարձր յատկութիւնը մեր ապրանքների, որով վերջինները միշտ աչքի են ընկել: Միայն մի քանի բարձր տեսակի ծխախոտի գներն են քիչ աւելացված, մէկ էլ՝ III տեսակի «Սասուն» և «Նարօդնի» ծխախոտի գները:

Մինչդեռ՝ մի քանի մանրավաճառներ, օգտվելով հանգամանքից, իրանց անձնական շահից դրդված, սկսել են ի չարը գործ գնել և վաճառել մեր ֆիրմայի գլանակները նշանակված գներից աւելի:

Մեր հաճախորդներին ապահովելու համար մանրավաճառների այդօրինակ անբարեխիղճ գործողութիւններից, խնդրում ենք ի նկատի ունենալ, որ ստորև բերված գլանակների գները մնացել են նոյնը՝ ինչ որ առաջ էին, այն է՝

«ՍԻՄՊԱՏԻԱ»	10 հատը՝	6 կ.
	25 »	15 կ.
«ՍՈՒԴԷԲՆԻ»	25 »	15 կ.
«№ 8» . .	10 »	6 կ.
«ԴՐ ՈՒԺԲԱ» և		
«ՏՕՎԱՐԻՇՉ»	20 »	5 կ.
«ՄԷՉՏԱ»	25 հատը՝	10 կ.
	15 »	6 կ.
«ԻՎԱՆ ԴԱ ՄԱՐԻԱ»		
և «ԱԷՐՕ»	25 »	15 կ.
«ՍԻՄՊԱՏԻԱ»	10 »	10 կ.

Մանրավաճառ խանութպանները այդ գներով պարտաւոր են վաճառել հաճախորդներին յիշեալ գլանակները:
Խորին յարգանքով՝ Ա./Տ. ԲՕԶԱՐՋԵԱՆՑ ԵՒ ՈՐԴԻՔ
(հ. կ.) առ. 865. 5—4

ՀԱՅՈՑ ԴՐԱՄԱՏԻԿԱԿԱՆ ԸՆԿ. ԽՈՐՀՈՒՐԴԸ

յայտնում է ի գիտութիւն Ընկերութեան պ. պ. անդամների, որ կիրակի, սեպտեմբերի 21-ին, երեկոյեան ժամը 7-ին, Կ. Հ. Բ. Ընկ. դահլիճում (Աբաս-Աբադեան հրապ., № 7)
ՆՇԱՆԱԿՎԱԾ Է
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

Օրակարգի խնդիրներն են.
1) Ընտրութիւն Ընկերութեան նոր անդամների:
2) Խորհրդի զեկուցումը միջնորդ դատարանի որոշման մասին և դրա հետ կապված խորհրդի անդամների ընտրութիւն:
3) Ընտրութիւն մրցանակաբաշխութեան յանձնաժողովի 7 անդամի և 3 փոխանդամի:
4) Ընթացիկ հարցեր: առ. (կ.) 879. 2—2

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ
Ս. Գ. ԿԵՕՆՃԵԱՆ
վերադառնալով վերսկսեց հիւանդների ընդունելութիւնը. պլոմբ, արհեստական ատամներ, ատամի հեռացումը առանց ցաւի:
Ընդունելութիւնը ամենայն օր.
Առաւ. 9—2 ժ.
Երեկ. 4—7 ժ.
Կիրակի օրերը 10—12.
Լերմոնտովսկայա փողոց № 1. մուտքը Նրբափողոցից:
առ. (ա. օ.) 804. 0—19

ԲԺԻՇԿ
Տուշանիկ Նաքաքեան
(Մասնագէտ կանանց հիւանդութիւնների եւ մանկաբարձութեան):
Ընդունում է հիւանդներին՝ (առ. ժ. $12^1/_2$—2. / եր. ժ. 4—6.
Հասցէն՝ Սօլօլակ, Ռտիշչևվսկայա փ. № 1.
Հեռախօս 10—58.
(Խ.Հ.Կ.) առ. 784. 100—13

ԿՈՎԿԱՍԻ ՀԱՅՈՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿ. ԽՈՐՀՈՒՐԴԸ
սեփական շինութեան մէջ
վիրաւոր զինւորների համար բանալով
ՀԻՒԱՆԴԱՆՈՑ ՅԻՍՈՒՆ ՄԱՀՃԱԿԱԼՈՎ

խոնարհաբար խնդրում է բոլոր սրտացաւ անձանց արձագանք տալ այդ բարի գործին և օգնել խորհրդին նուիրաբերութիւններով դրամով, սպիտակեղէնով, կահ-կարասիքով և մթերքներով: Ամէն մի հիւանդի պահելը արժէ ամսական 36 ռուբ.: Խորհուրդը շնորհակալութեամբ ընդունում է յանձնարարութիւն՝ պահել հիւանդներ նուիրատուի անունով:

Խորհուրդը սրա հետ միասին խնդրում է այն անձանց, որոնք կը ցանկանան ծառայել հիւանդանոցում գթութեան քրոջ, հիւանդապահի և այլ պաշտօններով, բարեհաճել գալ Ընկ. գրասենեակը գրվելու համար (Абасъ-Абадская пл. № 7 с. д.):
(օ. մ.) առ. 881. 6—3

Երկուշաբթի օրվանից, սեպտեմբերի 21-ից, ԿԱՐԴԱՑԷՔ
„ԽԱԹԱԲԱԼԱ“
Երգիծաբանական շաբաթաթերթը, որը հրատարակվելու է այսուհետեւ կանոնաւոր:
առ. 891. 1—1

ԳԱՅԻԱՆԵԱՆ ՕՐԻՈՐԴԱՑ ԴՊՐՈՑՈՒՄ
բացվել են դասեր ռուսաց լեզուից և գրականութիւնից 15 դաս—V, VI և VII դասարաններում. ռուսաց պատմութիւնից՝ 2 դաս—VI դասարանում:
Ազատ դասերի համար հրաւիրվում է դասատու բարձրագոյն կրթութեամբ:
Խնդիրներ ընդունվում են մինչև 26-ն սեպտեմբերի:
Մանրամասնութիւնների համար դիմել դպրոցի տեսչին:
(Ե. Հ.) առ. 892. 3—1 ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԻՒՆ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՈՒՆ
(ԶՈՒԲԱԼՈՎԻ ԱՆՈՒԱՆ)

Այսօր, կիրակի, սեպտեմբերի 21-ին
ՀԱՅԿ. ԴՐԱՄ. ԽՄԲԱԿՑ.
Մասնակց. դերասանների
Կը ներկայացնէ առաջին անգամ հայ բեմի վրա
I
ՈՎ Է ՅԱՆՑԱՒՈՐ
Մելօդրամա 3 գործ. Թարգ. Լ. Պօղոսեանի:
II
M-lle ՖԻՖԻ
Դրամա 1 գործ. Ֆրանս-պրուսական պատերազմից, հեղ. Օսկար Մետեններ:
ՄԱՍՆԱԿՑՈՒՄ ԵՆ.—տ. տ. Արուսեակ, Յասմիկ, Սաթենիկ, օր. օր. Վանեցեան, Թառայեան, պ. պ. Ամօ-Խարազեան, Բէգլջանեան, Գասպօ, Երամեան, Եաղուբեան, Եանիկեան, Ղանավօզեան, Մարգարեան, Մաւութեան, Վարդանեան և ուրիշներ:
Սկիզբը երեկ. ժամը 8-ին:
Տեղերի գները 50—5 կ.:
Ռեժիսոր՝ ԱՄՕ-ԽԱՐԱԶԵԱՆ
Վարչութեան հերթապահ անդամներ՝
ԽԱՐԱԶԵԱՆ և ՄԱԼԽԱՍԵԱՆ
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄՆԵՐԻ ԱՄԲՈՂՋ ՀԱՍՈՅԹԻ 2%-Ը ՅԱՏԿԱՑՎԱԾ Է ՊԱՀԵՍՏԻ ԶԻՆՈՒՈՐՆԵՐԻ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ՕԳՏԻՆ:

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ
Գ. Յ. ԳԱՐԱԿԻԼԵԱՆ
վերադառնալով արտասահմանից վերսկսեց հիւանդների ընդունելութիւնը՝ առ. ժամը 9—2 և երեկ. ժ. 5—7:
Վելյամինովսկայա փող. № 4.
(ա. օ.) առ. 871. 0—7

ԿՆԱԲՈՒԺԱԿԱՆ ԵՒ ՎԻՐԱԲՈՒԺԱԿԱՆ
ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
Ռտիշչևվսկայա 13, տելեֆօն 4—21.

Ընդունելութիւն թէ կանացի և թէ ներքին, նոյնպէս և վիրաբուժական կարիք ունեցող մնայուն (стаціонаръ) հիւանդների (բացի վարակիչ և հոգեկան հիւանդութիւններից) վաղօրօք գրվելու պայմանով:
Ընդունելութիւն՝ կանացի հիւանդ. ամեն օր՝ ժ. 11—12 առ.:

Հիւանդանոցի բժիշկները
Ա. Ա. Ցարութիւնեան
Ն. Ն. Վեսելովզօրով
Վ. Ա. Զակրժեվսկի
Ի. Գ. Կալամկարեան
Ա. Ա. Նովիցկիյ
Գ. Ն. Տէր-Ներսէսեան
Ա. Ր. Փիշէր
Ս. Պ. Շահպարոնեանց
(Հ. կ.) առ 868. 100—89

ԲԺՇԿԱՊԵՏ
Մ. Յ. ՄՈՒՐԱԴԵԱՆ
նախկին օրդինատ. Մոսկվայի համալսարանի և ասիստենտ Բեռլինի համալսարանի պրոֆ. Պօզների:
Ընդունում է հիւանդներին միզասեռական, սիֆիլիսի և կաշուի հիւանդութիւններով՝ առ. ժ. 10—12, երեկ. ժ. 4—6: Սօլօլակ, Ռտիշչևվսկայա փող. սեփ. տուն, № 1, հրդեհաշէջների բնակատեղի դիմացը, տելեֆօն 10—58.
(Հ. ու. կ.) առ. 875. 50—4

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ

Ներկայ համաեւրոպական պատերազմը առաջ է բերել հայ հասարակութեան բոլոր խաւերի մէջ ընդհանուր հետաքրքրութիւն: Մեզ հասած տեղեկութիւններից երևում է, որ մանաւանդ գաւառը սրտի անձկութեամբ սպասում է լրագրին, որպէսզի կարողանայ յագեցնել իր ծարաւը՝ լուրեր և տեղեկութիւններ իմանալու պատերազմի մասին:

Այդպիսի պայմաններում Թիֆլիսի և գաւառի բաժանորդները զրկված են շաբաթը մի օր, այն է երկուշաբթի օրերը լուրեր և տեղեկութիւններ ստանալուց, որովհետև այդ օրը մեր բաժանորդները և ընթերցողները «Մշակ» չեն ստանում, քանի որ երկուշաբթի օրը «Մշակ» չէ հրատարակվում:

Ցանկապէս մեր բաժանորդների և ընթերցողների շահերն ի նկատի ունենալով խմբագրութիւնը որոշեց երկուշաբթի օրերն էլ լոյս ընծայել «Մշակը» կէս թերթի ծաւալով, ժամանակաւորապէս, երբ կեանքը իր սովորական, նորմալ վիճակի մէջ մանելով, այլևս հարկ չի լինի այդպիսի արտակարգ հրատարակութիւն անել:

Ուստի վաղվանից սկսեալ «Մշակը» ամէն երկուշաբթի օրն էլ կը հրատարակվի կէս թերթ, ժամանակաւորապէս: Այդ կէս թերթը մեր բոլոր բաժանորդներին կուղարկվի ձրիաբար, իսկ հատավաճառով կը ծախվի 5 կոպէկ:

Այդ կէս թերթի մէջ կը զետեղվեն թէ շաբաթ օրվայ երեկոյեան և թէ կիրակի օրվայ առաւօտեան հեռագիրները, ինչպէս և յօդուածներ գլխաւորապէս վերաբերեալ պատերազմին:

ՀԱՄԱԵՒՐՈՊԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

—o—

ՌՈՒՍ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԵՒ ՌՈՒՍ-ԱՒՍՏՐԻԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

(Պետ. Հեռ. Գործ.)

20 սեպտեմբերի

ՊԵՏՐՕԳՐԱԴ.— Պաշտօնական: Գերագոյն Զօրահրամանատարի շտաբի կողմից. «Պրուսական արևելեան զօրաճակատում ճակատամարտը շարունակվում է: Մարիամպոլի շրջանում կռիւը դեռ աւարտված չէ: Կրասնոյի մօտ և Սիմնոյից դէպի արևմուտք գերմանական դիրքերը մենք ձեռք ձգեցինք գիշերային գրոհով: Թշնամին սկսեց նահանջել Լէյպունից դէպի Սուվալկի, հետապնդվելով մեր զօրքերից: Սէյնի-Սուվալկի խճուղու վրա գերմանացիների շարժումը մեր արտիլերիայի և հեծելազօրի ջոկատի գործողութիւնների ազդեցութեան տակ փոխվեց անկարգ փախուստի: Սուվալկի շրջանում տեղի է ունենում յամառ ճակատամարտ: Գերմանական զօրքերը յարձակման դիմեցին Աւգուստով-Սուվալկի զօրաճակատում: Ռակկիի մօտ գերմանացիք ձեռնարկեցին սուինային յարձակման, բայց սոսկալի ջարդ ստացան: Աւգուստովը ռմբակոծվեց հիւսիս-արևմուտքից ծանր թնդանօթներով մինչև սեպտ. 18-ի ցերեկվայ ժամը 2-ը, երբ մեր հետևակ գնդերը, դիմելով վճռական յարձակման, բոլորովին ցիրուցան արեցին թշնամուն այդ շրջանից: Շչուչինից և Գրաեվից թշնամին վանվեց: Մեր զօրքերն անցան գերմանական հողը: Օսովցայի դէմ գործող զօրամասի սայլերի մի մասը և աւտոմօբիլները մենք գրաւեցինք: Մլավի շրջանում թշնամին ձեռնարկեց արշաւանքի, բայց մեր զօրքերը խափանեցին:

ՖՐԱՆՍ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԵՒ ԱՆԳԼՕ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

(Պետ. Հեռ. Գործ.)

19—20 սեպտեմբերի

ԼՕՆԴՕՆ.—Անտվէրպէնից հաղորդում են լուրջ կռիւների մասին: Գերմանացիք շարունակում են ռմբակոծել բերդերի առաջին զօրագիծը: Նրանք պայթեցրին ռազմամթերքների պահեստը: Լօնդօնի շրջաններում կարծում են, որ գերմանացիք աշխատում են մնալ իրանց դիրքերում Ֆրանսիայում, մինչև որ վերցնեն Անտվէրպէնը, որպէսզի Ֆրանսիայում ունեցած անյաջողութիւնները ծածկեն Բէլգիայում տանելի յաղթութեամբ: Այստեղ յոյս ունեն, որ գերմանացիք ստիպված կը լինեն նահանջել Ֆրանսիայից աւելի առաջ, քան աջողութիւն ձեռք կը բերեն Անտվէրպէնում:

ՊԱՐԻԶ. — Պաշտօնական հաղորդագրութիւն. «Ընդհանուր դրութիւնն անփոփոխ է: Այնու ամենայնիւ մենք առաջացել ենք ձախ զօրաթևում Սոմմայից դէպի հիւսիս և աջ զօրաթևում Վէվրի հարաւային մասում»:

Առ. ժամը 7-ին նկատվեցին գերմանական երկու աէրօպլան, որոնք դիմում էին Կոմպիէնի վրայով դէպի Պարիզ: Նրանց դէմ ուղարկվեց ֆրանսիական աէրօպլան: Նկատելով նրան, գերմանականները շրջվեցին ետ:

Սեպտ. 18-ի երեկ. ժամը 11-ին հրատարակված պաշտօնական հաղորդագրութիւնը յայտնում է. «Այսօր երեկոյեան ոչինչ էական տեղի չունեցաւ: Ռուայի շրջանում բաղդը շրջվեց մեր կողմը, նաև Արգօններում, ուր մենք նորից առաջացանք մի փոքր: Ընդհանուր դրութիւնը մնում է բաւարար»:

ԼՕՆԴՕՆ.— «Դէյլի-Տելէգրաֆը» հաղորդում է. «Ըստ երևոյթին թշնամու լուրջ դիմադրութիւնը նրա աջ զօրաթևում ընկճեցին երէկ: Թշնամու արտիլէրիան լռեց: Դաշնակիցների դրութիւնը ուժեղ է նիւթական տեսակէտից և զօրքերի ոգևորութեան տեսակէտից»:

ԱՆՏՎԵՐՊԷՆ.—Պաշտօնապէս հաղորդվում է, որ սեպտ. 7-ին սկսված Անտվերպէնի բերդերի ռմբակոծութիւնը ամենածանր թնդանօթներով՝ շարունակվում է: Բերդերը ցոյց են տալիս կորուկ դիմադրութիւն: Հարաւ-արևելքում գերմանացիների յարձակումը Վիլէբրուկի վրա վանվել է:

ԱՒՍՏՐՕ-ՍԵՐԲԻԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

(Պետ. Հեռ. Գործ.)

19 սեպտեմբերի

ԲԷԼԳՐԱԴ. — Հետախուզումներ կատարելիս, սերբերը ձեռք ձգեցին թշնամու երկու լեռնային թնդանօթ, երկու գնդացիր ու փչացրին չորս գասւբից Բէլշանի դիրքերում:

Աւստրիացիք սոսկալի գազանութիւններ գործեցին Սրեմում սերբ ազգաբնակութեան վրա: Նրանք հրդեհում էին տները, կախում էին սերբերին առանց սեռի ու հասակի խտրութեան, շիկացած երկաթով տանջում էին նորածիններին, սրբապղծում էին եկեղեցիները, շատ ականատես սերբեր տարան Ունգարիա: Փախստականներն անհաւատալի մանրամասնութիւններ էին պատմում Ունգարիայի և Խօրվաթիայի սերբ ազգաբնակութեան յուսահատական վիճակի մասին:

ԾՈՎԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄ

(Պետ. Հեռ. Գործ.)

20 սեպտեմբերի

ՀՌՈՄ.—Ադրիատիկ ծովի մի քանի տեղերում լողացող ականներին զոհ գնացին շատ ձկնորսներ։ Իտալական ծովային մինիստրութիւնը ուղարկեց հականականաւեր՝ ականները ոչնչացնելու համար և կարգադրեց դադարեցնել պետական գանձարանից նպաստ ստացող ընկերութիւնների նաւարկութիւնը։ Խորհուրդ է տրվում ծով ելնել միայն ցերեկով, այն էլ մեծագոյն զգուշութեամբ ու սեփական րիսկով։

ԳԱՐՏԼՊՈՒԼ.—«Սէլբի» շոգենաւը, որ Շիլդսից գնում էր դէպի Անտվէրպէն, կպաւ ականի Հիւսիսային ծովում և ջրասոյզ եղաւ. ազատվել են 20 նաւաստի։

ՏՕԿԻՕ.—Երէկ ջրասուզվեց գերմանական մի հականականաւ։

ՊԱՏԵՐԱԶՄ ՀԵՌԱՒՈՐ ԱՐԵՒԵԼՔՈՒՄ

(Պետ. Հեռ. Գործ.)

20 սեպտեմբերի

ՏՕԿԻՕ.—Ցինդաօյի բերդերը ռմբակոծվում են։ Կռւին մասնակցում են երկու կողմերի ռազմանաւերը։

ՀԱՄԱԵՒՐՈՊԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՈՒՐՋԸ

(Պետ. Հեռ. Գործ.)

19—20 սեպտեմբերի

ՊԵՏՐՕԳՐԱԴ.—Գէորգիի 3-րդ աստիճանի շքանշան շնորհվեց գեներալ Բրուսիլովին օգոստոսի 24—30-ին քաղաքային դիրքի վրա կատարված յարձակումները վանելուն համար. 4-րդ աստիճանի Գէորգի՝ գեներալ Եվէրտին Լիւբլինի վրա գործված յարձակումներին 8 օր շարունակ դիմադրելուն համար. 4-րդ աստիճանի Գէորգի՝ գեներալ Պլեվէին օգոստոսի 24-ից մինչև սեպտեմբերի 1-ը աւստրիացիների և գերմանացիների դէմ կռւելուն համար։

Սենատոր Մէշչանինովը նշանակվեց սանիտարական մասի գերագոյն պետի օգնական։

ԿՈՊԵՆՀԱԳԵՆ.—Վիէննայից պաշտօնապէս հաղորդում են, որ գեներալ Աուֆֆենբերգը հիւանդ է։

ԼՈՆԴՕՆ.—«Թայմսը» հաղորդում է, որ գերմանացիների շարքերում նկատվում է ծայրայեղ ուժասպառութիւն երկարատև զրկանքներից. կօշիկները բոլորովին մաշվել են, զգեստները՝ պատառոտվել։ Ֆրանսիացիք կռւում են կրկնապատիկ քաջութեամբ, հանգստութեամբ ու սառնասրտութեամբ։ Շեշտակի գործ է տեսնում նրանց արտիլերիան թշնամու դէմ։

Հնդիկ զօրքերն ափ են իջել Ֆրանսիայում։

Վիրաւոր բէլգիացիներին բերել են Անգլիա և անգլիական կառավարութիւնն է հոգում նրանց բժշկութեան ծախքը։

Այստեղ յոյս ունեն, որ վերջին մեծ ճակատամարտը մօտենում է իր վախճանին։

«Թայմսը» ամերիկեան մամուլի յայտնած կասկածների առիթով, թէ Անգլիան մտադիր է հաշտութիւն կնքել համեմատաբար դիւրին պայմաններով, յայտնում է, որ այդ ամեն տեղեկութիւնները հանդիսանում են գերմանական յերիւրանք, որոնք հետամուտ են փոխադարձ կասկածներ սերմանելու դաշնակիցների միջև։ «Անգլիան,—ասում է «Թայմսը»,—հաշտութիւն կը կնքէ միայն այն ժամանակ, երբ իր վախճանին հասցնէ սկսված պատերազմը»։

ՊԵՏՐՕԳՐԱԴ.—Վիէննայի ազգաբնակութեան ստորին խաւերի դժգոհութիւնը սաստկանում է. Աւստրօ-Ունգարիայի մայրաքաղաքում կայացան մի շարք բազմամարդ միտինգներ պատերազմի և կառավարութեան դէմ։ Պահանջվում է իրական օգնութիւն ցոյց տալ պահեստիների ընտանիքներին։ Ցոյցագործութիւնները աճել են անսովոր չափերով. վերջին օրերս նկատվում է, որ աւելի ունևոր մարդիկ մեկնում են քաղաքից։ Լուրեր են պտտվում, թէ շուտով կայսրը և կառավարութիւնը մեկնելու են Վիէննայից։

Սպանվել է գերմանացի գեներալ-լէյտ. Շտէյնմէյցը՝ ծանր արտիլերիայի 3-րդ զօրամասի պետը։

Խօլերան Աւստրօ-Ունգարիայի ներքին նահանգներում համաճարակի բնոյթ է ստանում։ Միջոցներ են ձեռք առնվում, որպէսզի խօլերան մուտք չը գործէ գործող բանակը։

Շնորհիւ մասնաւոր ձեռներէցութեան, Պետրօգրադում ներկայումս պատրաստված է 10,000 տեղ վիրաւորների համար։ «Լինէգօլզֆիլս» ընկ. կարմիր խաչին նուիրեց 10,000 ր.։

Սինօդը որոշեց յիշատակել պատարագին Կայսերական Գերդաստանի մասին սահմանված աղօթքներում, Գահաժառանգ Արքայազնի անունից յետոյ, նաև Գերագոյն Զօրահրամանատար Մեծ Իշխան Նիկոլայ Նիկոլայեվիչի անունը։

Մինիստրների խորհուրդը որոշեց տալ համաչէմստվային միութեանը 15 միլիօն ռուբլի՝ 150,000 մահճակալ հաստատելու և մի ամսով հիւանդ ու վիրաւոր զօրականներին խնամելու համար։

Բժշկական խորհրդին կից հաստատված մասնաժողովը խնդրում է որքան կարելի է լայն մանրամասն տեղեկութիւններ հաղորդել ռուսական կուրօրտների դրութեան մասին մասնաժողովի նախագահ պրոֆ. Սիմօնօվսկիին հետևեալ հասցէով. Петроградъ Фурштадская, № 41։

ՊԵԱՏԻԳՕՐՍԿ.—Ջրերային սէզօնի համար յատկացված է 30000 ր.։ Սպասվում են են 90000 վիրաւոր և հիւանդ զօրական։

ԿԻԵՎ.—Քաղաքային դուման յատկացրեց 1000 ր. և որոշեց հանգանակութիւն սկսել հերոսաբար ընկած օդագնաց Նեստերովին արձան կանգնեցնելու համար։

ՄԻՆՍԿ.—Անցան 30 վագօն ընտիր անասունով, որ գրաւված են Արևելեան Պրուսիայում Վիլհէլմ կայսրի կալուածքում։

ԿԱՀԻՐԷ.—Մեծ բրիտանական կառավարութիւնը, ընդգծելով Եգիպտոսի ազգաբնակութեան լօյալութիւնը, ապահովեց եգիպտական կառավարութեանը 5 միլիօն ֆունտ ստերլինգ բամբակի բերքի սպառելու համար։

ՀՌՈՄ.—Եմմանուէլ թագաւորը 20,000 լիր նուիրեց Ադրիատիկ ծովում ականներից մահացած ձկնորսների ընտանիքների օգտին։

Լիբերալ կուսակցութեան պատգամաւորները, որոնք մեծամասնութիւն են կազմում պարլամենտում, այսօրվայ ժողովում բանաձև ընդունեցին, թէ Իտալիայի չէզոքութիւնը նպատակայարմար է և որ իտալական կառավարութիւնը կարող կը լինի ապահովել ազգային շահերը կտրուկ քայլ խելացի պատրաստութեամբ։

ՊԵՏՐՕԳՐԱԴ.—Ծովային գեներալ-շտաբը պաշտօնապէս նախազգուշացնում է ռուս հասարակութեանը՝ հաւատ չընծայել մեր թշնամի տէրութիւնների լրագիրների մատուցածին ու տենդենցիօզ տեղեկութիւններին, վերաբերեալ մեր ծովային գործողութիւններին։ Ռազմագիտական նկատումներից դրդված, ծովային գեներալ-շտաբը ձեռնպահ է մնում հրապարակով յայտնելու մեր ծովային ույժերի ուր գտնվելու կամ թէ գործողութիւնների մասին։

ՄՕՍԿՎԱ.—Տրօյցէ-Սերգիեվսկի մենաստանը 100,000 ր. նուիրեց վիրաւորների համար։ Մենաստանում պատրաստված է 160 մահճակալ վիրաւոր զինւորների համար։

ՏՕԿԻՕ.—«Օսակա-Մայնիչա» լրագիրը կարծում է, որ Ռուսաստանի և Ճապօնիայի միջև իբրաւէս սահմանվել են դաշնակցական յարաբերութիւններ, որոնք հեշտութեամբ կարող են ձևակերպվել։

ՑԵՏԻՆԻԷ.—Չերնոգօրական գլխաւոր հրամանատարը առանձին սուրհանդակի ձեռքով ստացաւ Բալկանների աւստրիական ընդհանուր զօրահրամանատարից առաջարկութիւն՝ գերիներին փոխանակելու։ Չերնոգօրական գլխ. հրամանատարը առաջարկութիւնը մերժեց, գտնելով որ Աւստրիայում ոչ մի գերի չերնոգօրցի չը կայ։

ՍԱԼՕՆԻԿ.—Սեպտեմբերի 17-ին ռուսական ընկերութեան «Օդեսսա» շոգենաւով Գէնուայից եկան 350 ռուս։ Սեպտ. 18-ին և 19-ին եկել են ընդամենը 1200 ռուս, որոնք անցնելու են Բուլգարիայով։

ԱՅԼ ԵՒ ԱՅԼ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

(Պետ. Հեռ. Գործ.)

20 սեպտեմբերի

ՈՒՐՄԻԱ.—Թիւրքական քիւրդերի գործողութիւնները ընդունում են լայն չափեր և յանդուգն բնոյթ։ Աւելի քան 1000 քիւրդ անցել են սահմանը, գրաւելով Բարադոստում արևմտեան գիւղերը։ Եռանդուն ագիտացիա է մղվում Ռուսաստանի դէմ։

Սկսվեցին քիւրդերի աւազակութիւնները Բէգվարդում և Տերգէվէրում։ Սահմանակից գիւղերի քրիստոնեաները փախել են Մավնուէ։ Թիւրքական քիւրդերը արտաքսել են պարսկական Ջալմէ մաքսատան ծառայողներին։

ՊԵՏՐՕԳՐԱԴ.—Ժող. լուս. մինիստրութիւնը մշակել է մի օրինագիծ՝ կանանց Կազանի համալսարանի ֆակուլտէտն ընդունելու մասին։

Աւելի յարմարութիւն տալու Կովկասի և մայրաքաղաքների հաղորդակցութեան համար, ամեն օր երթևեկելու են ճեպընթաց գնացքներ Պետրօգրադից՝ Րօստով և Րօստովից՝ Պետրօգրադ։

ՍԵՎԱՍՏՕՊՕԼ.—Ծովային ուժեղ փոթորիկ է։

ՎԱՇԻՆԳՏՕՆ.—Պետական քարտուղար Բրայանը և ռուսաց դեսպանը համաձայնութիւն ստորագրեցին չէզոք դատարանի մասին։

ԹԷՀՐԱՆ.—Մէշէդից հաղորդում են, որ կօզակների մի խումբ քաղաքի շրջակայքում ենթարկվել է աւազակների հրացանաձգութեան։ Հրացանաձգութեան ժամանակ վիրաւորվել են երեք ռուս, որոնցից մէկը վախճանվեց։ Աւազակները թողին 8 սպանված։ Հրացանաձգութեան վայրն են մեկնում հիւպատոսարանի և պարսից իշխանութեան ներկայացուցիչների հետ միասին մեր զինւորական պաշտօնեաները յարձակողներին ձերբակալելու համար։

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՈՒՐՋԸ

◆ Սպանական կառավարութիւնը առաջարկեց ֆրանսիական կառավարութեանը տեղաւորել սպանական հիւանդանոցներում 30,000 վիրաւորի։

◆ «Арм. Вѣст.»-ը գտնում է, որ աւստրիական զօրքերի թիւը համարեա կիսվել է։ Նիւթական մասը բոլորովին փչացել է։ Աւստրիական զօրքերի ոգևորութիւնը մեռել է, այնպէս որ ռուսները կարող են ապահովված համարել իրանց գործը աւստրիացիների հետ։ Ռուսաց ձեռքն են անցել աւստրիական 16 բերդ և միայն կարևոր է այժմ ձեռք ձգել Պերեմիշլը, որտեղից դէպի Վիէննա և Բուդապեշտ բացվում է անարգել ճանապարհ։

◆ «Վիենէր Ժուրնալի» տեղեկութիւնների համաձայն, աւստրիական զօրքը կորցրել է սպանված 12 գեներալի։

◆ Երիտասարդ թիւրքերի բարեկամ մակեդոնացի Սանդանսկին, ահագին թւով հրոսակախմբերի գլուխն անցած, մտնում է Սերբիայի սահմանները։ Բուլգարների մի ուրիշ հրոսակախումբ հրդեհել են Քեօփրիւլիի (Վելէս) սերբ նահանգապետի տունը և յօդս են ցնդեցրել զէնքերի պահեստը։

◆ «К. С.»-ն զինւորական ցենզուրայի թոյլտուութեամբ երէկ տպել էր հետևեալը. «Օսովցայի մօտ գերմանացիք գլխովին ջարդվեցին։ Մերոնք իր ժամանակին բաց թողին Աւգուստովի ջրանցքի ջուրը, որ բռնեց մեծ տարածութիւն։ Մեր ձեռքն ընկան շատ թնդանօթ ու դրամարկղներ։ Նեմանի մօտ եղած բոլոր կռիւներում գերմանացիք կորցրին 10,000 սպանված»։

◆ «Кіевлянинъ»-ի խմբագիր Շուլգինը կռւում վիրաւորվել է։

◆ «Рѣчь»-ին հեռագրում են Կոպէնհագէնից, որ, ըստ պաշտօնական տեղեկութիւնների, գերմանացիների սպանվածների և վիրաւորների թիւը 120,000 է։ Սեպտեմբերին ունեցած կորուստները չեն հրատարակված։

◆ Բուխարեստում բռնվել է մի գնացք 21 վագօնով, որոնցով գերմանացիք ռազմամթերք, գերմանական զինւորական համազգեստ ու քարտէզներ էին ուղարկում Թիւրքիա։

◆ «Пет. Курьеръ»-ին հեռագրում են, որ, «Times»-ի ստացած տեղեկութիւնների համաձայն, բաւարական կրօնպրինցի զօրքը ջարդվել է, ինքը կրօնպրինցը գերվել է Նանսիի մօտ։

◆ Ռուս զօրքերը վերցրել են Պերեմիշլի բերդերից մի քանիսը։

◆ Գերմանացիք Չենստոխովից շտապով արշաւանքի են ձեռնարկել։

◆ Աւստրիացիք արձակել են լեհական լէգիօնները։

◆ Մոսկվայի միակ ամսաթերթ «Русская Мысль»-ը, որի խմբագրութիւնը գտնվում է Պետրօգրադում, դադարեցրեց իր հրատարակութիւնը պատերազմի ընթացքում։

◆ Դերբենտում կազմակերպվել է մահմեդականներից մի գունդ «Կովկասեան վայրենի դիվիզիա» անունով։ Հրամանատարելու է վնդապետ Վէքիլովը։

◆ Մինիստրների խորհուրդը որոշել է ոչ մի դէպքում չը կատարել վճարումներ պետական գանձատան և հասարակական հաստատութիւնների կողմից աւստրիական և գերմանական ֆիրմաներին։

ԹԻՒՐՔԻԱՅՈՒՄ

(Պետ. Հեռ. Գործ.)

20 սեպտեմբերի

ԼՕՆԴՕՆ.—Մամուլի բիւրօն բողոքում է անգլօ-թիւրքական յարաբերութիւնների վատացման տեղեկութիւնները անհամապատասխան բրիտանական կառավարութեան հայեացքներին։ Թիւրքաց դեսպանը յայտնում է, որ Բ. Դուռը պահելու է ամենախիստ չէզոքութիւն։

ԲՈՒԽԱՐԵՍՏ.—Եկաւ թիւրքաց զինւորական մասնաժողով՝ մթերք, հացահատիկ, ալիւր ու այլ ուտելիք գնելու համար։

Ռումին իշխանութիւնները արգելեցին ալիւր բեռնել այն շոգենաւերում, որոնք դիմելու են Կ. Պոլիս և Ադրիանուպոլիս։

Հաղորդում են, որ վերջին զօրախաղերին, որոնք տեղի ունեցան Սուլէյման փաշայի ղեկավարութեամբ, թիւրք զինւորները, ուտելիքի պակասութեան պատճառով, ստիպված էին ուտել իրանց զգեստների կոճերը։ Հետևանքում առաջին օրը միայն 30 զինւոր և կազմից դուրս եկան 600։

(Լրագիրներից)

◆ Բ. Դուռը պաշտօնապէս տեղեկացրեց արտասահմանեան պօստաներին, որ հոկտ.

ՖԷԼԻԷՏՕՆ

ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ—GALA

«Théatre d'Europe»-ում նորերս տրվեց gala ներկայացում։

Աշխարհահռչակ ձեռնածուներ «Հօհէնցօլլէրն, Հաբսբուրգ և Ընկ.» սև ու սպիտակ կախարդութեան սէանս։

Ասենք, ոչ մի «ընկերութիւն» չերևաց նրանց մօտ։

«Ընկ.»-ը աֆիշի վրա գրված էր այնպէս, ձևի համար միայն։

Առաջին կարգերում նստել էին, ի հարկէ, գերմանացիք։

Մնացած ժողովուրդները նայում էին գալլէրէայի վերևից։

Դէհ, ի հարկէ, սէանսից առաջ երաժշտախումբը չափազանց երկար նուագեց «Wacht au Rhein», իսկ գերմանացիք աղաղակում էին «hoch» և «nieder mit»։

Վերջապէս վարագոյրը բարձրացաւ թնդանօթաձգութեան, հրացանաձգութեան ու գնդակացիրների կրակի տակ։

Բեմի վրա կանգնած էին և գլուխ էին տալիս հասարակութեանը երկու «ընկերները»։

— Գերմանացիներ!—կարծես զինւորական վարժութեան մէջ պոռաց հրամանատարի ձայնով Վիլհէլմը.—Դուք, որ «վեր էք բոլորից», որ չէք վախենում ոչ ոքից, բացի սեփական գերմանական Աստուծուց,—դուք, ես հաւատացած եմ, այժմ էլ չէք վախենայ... իսկ միացածներին նախազգուշացնում եմ՝ որ ցոյց կը տրվեն սարսափելի բաներ!!

— Ոչինչ... աւելի սարսափելիներն ենք տեսել,—լսվեց մի ձայն գալլէրէայից։

— Ո՛չ, դուք հանաք մի կարծէք։ Ցամենայն դէպս թոյլ ջղեր ունեցողները աւելի լաւ է չը նայեն։

Վիլհէլմը քայլեց բեմի վրա, աննկատելի կերպով հրեց կողքից իր «ընկերին», որ ծերութիւնից ամեն քայլէ նիրհում էր։

— Այ, ինչ, ելի մէկին պէտք է պատերազմ յայտարարե՞լ,—քնաթաթախ հարցրեց Ֆրանց-Յովսէփը։—Յայտնեցէք... Մի թըշնամի աւելի, կամ պակաս...

Նա նորից ննջեց։

— Այժմ ցոյց կը տրվի Գերմանիայի ֆինանսական կարողութիւնը,—շարունակեց Վիլհէլմը։ Տուէք, պարոններ մի ոսկէ դրամ!

— Հը՛մ, հը՛մ, հը՛մ... ամբողջ դահլիճը ասես վայրկենապէս մրսեց։

— Ես սպասում եմ,—կանգնեց Վիլհէլմը բեմի առաջի մասում։—Հանգիստ եղէք, իմ զգեստը ոչ մի գրպան չունի...

— Նա կուլ կը տայ դրամը...

— Մի տես ինչ ճարպիկն է...

— Ընկերոջիցդ ուզիր...—աղաղակում էին գալլէրէայի վերևից։

Իսկ առաջին կարգում նստած գերմանացիք լուռ էին։

— Մի՞թէ ոչ ոքի մօտ չը կայ,—հարցրեց Վիլհէլմը։—Լաւ. եօլա կը գնանք սեփական միջոցներով։ Բարեկամս, տուէք ինձ ոսկէ դրամ։

— Դուք ինձանի՞ց էք խնդրում,—զարթնեց «ընկերը»։

— Դէհ, ի հարկէ, ձեզանից,—գրգռված նկատեց Վիլհէլմը։ Էլ ումից պէտք է ես խնդրեմ...

— Աւա՜ղ, բարեկամս։ Ունէի ոսկէ գուլդէններ, բայց... մոռացել եմ, թէ ուր կորան նրանք։

Ֆրանց-Յովսէփը ընկաւ մտածմունքի մէջ։

— Ախ, հա, յիշեցի։ Ինձ ասացին, որ նրանք գործածութիւնից իրանց քաշը կորցնում են։ Այդ պատճառով մենք փոխարինեցինք թղթադրամով։

— Լաւ, ապա ինչպէս անել,—շշնջաց Վիլհէլմը։—Ես նոյնպէս թղթադրամ ունեմ։

Մի բան մտածեցէք։ Դուք այնպէս հնարագէտ էք,—նոյնպէս կամացուկ ասաց Հաբսբուրգը։

— Պարոններ, հասարակութեան ցանկութեամբ ներկայացման այս բաժինը... յետաձգվում է,—յայտարարեց Վիլհէլմը։

Գերմանացիք ազատ շունչ քաշեցին։ Գերմանուհիները ձեռքերից վայր ձգեցին դուլպաները, որոնց մէջ նրանք կարել էին իրանց փողերը։ Գալլէրէայում թեթև շուացրին։

— Ցոյց է տրվում Գերմանիայի դաշնակցական ույժը,—շարունակեց կայզէրը։—Գերմանացիք դաշնակիցների կարիք չունեն, բայց երբ կամենան, կարող են ստեղծել ոչնչից...

Վիլհէլմը հանեց սաղաւարտը և ամրացրեց սեղանին։

— Այս սաղաւարտի մէջ ես խառնում եմ տաս սովորական հաւկիթ։ Խառնում եմ գդալով։ Եյս, ցվեյ, դրեյ... պատրաստ է։

Կայզէրը ձեռքը խոթեց սաղաւարտի մէջ։

— Դաշնակից № 1,—բացագանչեց նա, հանելով մի երկար մակարոն.—մեր յարգելի դաշնակից Իտալիան։ Ի՞նչ է։

Մակարոնից ընկաւ մի թուղթ, որի վրա պարզ գրված էր.

«Չէզոքութիւն»։

— Զարմանալի է,—յոնքերը կիտեց կայզէրը։ Ոչինչ չեմ հասկանում։ Բայց... շարունակենք։ Դաշնակից № 2։

Վիլհէլմը երկու մատով զգուշանքով դուրս քաշեց սաղաւարտից... մի ճապօնացու։

— Ֆի՛, «դեղին վտանգ», ասաց նա։—Սակայն, այժմ ժամանակը չէ ընտրութիւն անել։ Ինչպէս Սա՞ էլ նոյնպէս։

Փոքրիկ ճապօնացին աղաղակում էր ամբողջ ույժով «բանզայ», և օդում ճօճեցնում էր դրօշակ մակագրութեամբ՝

— Պատերազմ Գերմանիայի դէմ։

— Դէհ, լաւ է, լաւ։ Աշխարհը հօ չը քանդվեց։ Արիաբար ձեռքը նորից կոխեց կայզէրը սաղաւարտի մէջ.—Դաշնակից № 3.

— Ա՜յ, օ՜յ, վախենում եմ...—լսվեց յուսահատական հառաչանք։

Սաղաւարտից երևաց թիւրքաց կարմիր ֆէսի ծայրը։

— Ը՛հը,—ուրախութեամբ ժպտաց Վիլհէլմը,—ես գիտէի, որ Թիւրքիան մեզ հետ է... Դուրս եկէք, թանգագին եղբայրս...

— Օ՜յ, վախենում եմ...—հառաչում էր թիւրքը։

— Ասացէք, ինչի՞ց էք վախենում։ Դուրս եկէք։

— Ամենից էլ վախենում եմ, և՛ ռուսներից, և՛ ֆրանսիացիներից, և՛ անգլիացիներից, և՛ յոյներից... Ձեզանից էլ եմ վախենում... Իմ հայերից էլ, քիւրդերից էլ, արաբներից էլ... Օ՜յ... թողէք ինձ։ Ես լաւ է թագնվեմ։

— Անկարելի է։ Դուք պէտք է երևաք հասարակութեանը... ասաց Վիլհէլմը։—Գեներալ Սանդերս, եկէք հրէք...

— Օ՜յ, օ՜յ, օ՜յ, ի սէր Աստուծոյ, ձեռք մի տաք ինձ եկէք սուինով... Ես խուտուտ ածելուց էլ եմ վախենում...

— Գոնէ բարձրաձայն, ի լուր ամենքի յայտնեցէք, թէ դուք մեր դաշնակիցն էք...—համոզում էր թիւրքին Վիլհէլմը։

— Ես ձեր... «չէզոքութիւն»... ու ֆէսը անյայտացաւ սաղաւարտի մէջ...

Վիլհէլմիս բանը բուրդ է։ Ո՞ւմ էլ որ հանում է, կամ «չէզոքութիւն», կամ «պատերազմը Գերմանիայի դէմ» է դուրս գալիս։

Սէանսի վերջը սաղաւարտից կայզէրը հանեց ինչ որ ողորմելի բան, ասես յուշկապարիկ լինէր։

Բացեց—պրինց Վիդ։

— Ա՛, հին ծանօթ է։

— Պատիւ ունեմ ներկայանալ, Euer Majesta't,—ասաց Վիդը զուտ պրուսական բարբառով։

— Դուք, ի հարկէ, մեզ հետ էք։

— Շատ ճիշդ է։

— Տեսնում էք, պարոններ։ Ահա մեր դաշնակիցը։ Ողջունում եմ պանծալի Ալբանիային, որ վճռել է կռւել մեզ հետ կողք-կողքի թշնամիների դէմ։ Բերէք, ուրեմն, պրինց, ձեր լէգիօնները։

— Բայց... Euer Majesta't, ես առանց լէգիօնների եմ։

— Ինչո՞ւ։ Իսկ ո՞ւր են ձեր ալբանները։

— Այնտեղ, Euer Majesta't... Ալբանիայում մնացին... Գրողը տանի նրանց։ Նրանց հետ անկարելի է հաշտվել։

— Ուրեմն դուք...

— Բոլորովին ճիշդ է։ Եկել եմ իմ հին տեղը՝ իբրև Պոտսդամի հուսարական գնդի ռօտմիստր, ձեր թոյլտուութեամբ։ Թագաւորի պաշտօնից ես հրաժարվեցի, որովհետև ոչ մի շահ չը կար...

Պրինց Վիդը խիզախօրէն երեսը շուռ տուեց և քայլերթով դիմեց դէպի կուլիսը։

Կայզէրը խիստ շուարել էր։

— Փորձեցէք դուք,—զարթեցրեց նա Ֆրանց-Յովսէփին,—գուցէ ձեզ մօտ աւելի լաւ դուրս գայ...

— Իմ ժողովուրդներ,—սկսեց ծերունի Հաբսբուրգը, մօտենալով բեմի առաջին մասին։—Հա, ժողովուրդները իմը չեն. ոչ, ժողովուրդները իմն են. բայց ինչպէս թէ իմը չեն։ Ես, կարծես, մի փոքր շփոթվեցի... Բայց միևնոյն է։

Ֆրանց-Յովսէփը լռեց, սեղմեց շրթունքները և շարունակեց.

— Լսեցէք, թէ ինչ կասէ ձեզ ծերունի Ֆրանցը։ Ես դաշնակիցներ չունեմ, բացի Վիլհէլմուշկից. Նա էլ ինձ հարկաւոր չէ։ Ես այնքան զինւոր ունեմ, որ նոյնիսկ ուտելիք էլ չեմ կարողանում հասցնել։ Ամեն տեղը զինւորներ, աջ ու ձախ։

Ֆրանց-Յովսէփը իր առաջ դարսեց սեղանի վրա մեծ ու փոքր քթախոտի տուփեր։

— Տեսնում էք, ահա սովորական քթախոտի տուփեր. մինչդեռ, ես երբ կամենամ, նրանց միջից զինւորներ կը հանեմ... իմ զինւորներին։ Դիւթական տուփեր են...

Նա վերցրեց նրանցից մէկը «Բօհէմիա» մակագրութեամբ։

— Եյն, ցվէյ, դրէյ,—ասաց ծերունին, բանալով տուփը։—Այստեղ իմ հաւատարիմ չեխերն են...

Տուփից դուրս թռաւ չեխը ազգային դրօշակով ու աղաղակեց.

— Կորչի Աւստրիան...

— Օ՜, զարմացաւ Ֆրանց-Յովսէփը։—Տարօրինակ է։ Ինչ որ փչացել է մեխանիզմի մէջ։

Նա վերցրեց երկրորդ տուփը «Բօսնիա» մակագրութեամբ։

— Այստեղ արդէն ամեն ինչ կարգին է,—ժպտաց նա։—Վերջերս կարգ ու կանօն մտցրի։

Բայց այդ տուփից անսպասելի կերպով թռաւ սերբը, որ ծածանում էր սերբիական դրօշակ։

— Ա՜յ, այ, սա ինչպէս էր մտել այստեղ։ Միթէ ծակեր ունի տուփը,—զարմացաւ Ֆրանց-Յովսէփը։

Նա բացեց «Հէրցօգօվինա» տուփը, բայց նրա մէջ երևաց բարկացկոտ չերնոգօրցին։

Դողդոջուն ձեռքերով բացեց ծերունին «Գալիցիա» տուփը։

— Տրախ...։

— Կօզակ!—աղաղակեց ծերունին սարսափով և փախաւ դէպի կուլիսը։

Տուփից սկզբում երևաց կօզակի հին մօրթէ գդակը, իսկ յետոյ ինքը՝ իր սև բեխերով՝ ուրախադէմ կօզակը։

— Լվովում քաւթառները թխում են նոյն տեսակ լաւաշներ, ինչպէս մեզ մօտ Րէչէւում,—ասաց կօզակը։

Գալլէրէան ծափահարեց, հրճուաց։ Պարտերը մտաւ աթոռների տակ...

Բեմ դուրս եկաւ մի «անյայտ» մարդ և խուլ ձայնով խոր լռութեան մէջ աղաղակեց.

— Ներկայացման շարունակութեան մասին կը յայտարարվի առանձին։

Փոխ. Ե.

1-ից նրանց ֆունկցիաները դադարում են։ Գեներալ-տեսուչներին պատուիրագրված է վերացնել հիւպատոսական դատարանները և առաջարկված է ստանալ նրանցից բոլոր գործերը։

◆ Կ. Պօլսի շրջակայքում բաշիբօզուկները կողոպտում և սպանում են քրիստոնեայ ազգաբնակութիւնը։

◆ «Н. В.»-ի Կ. Պօլսի թղթակիցը գրում է, որ Թիւրքերն ամեն կերպ աշխատում են պատերազմ առաջ բերել Ռուսաստանի դէմ։ Առաջին հերթին՝ Թիւրքերը սկսել են անողոք հալածանք յոյն ազգաբնակութեան դէմ։ Բաւական է ասել, որ շատ կարճ ժամանակամիջոցում Թիւրքիայից գաղթել են 285,000 յոյն։

◆ Ամերիկեան կառավարութեան պահանջով ետ է կանչվել Վաշինգտոնի Թիւրքաց դեսպանը յօգուտ Գերմանիայի ագիտացիա մղելու պատճառով։

◆ «Թանինը» գրում է. Թէ հէնց որ Թիւրքիան պատերազմ յայտարարէ, բուլղարական զօրքերը ներս են խուժելու Սերբիական Մակեդոնիա։

◆ «Թայմսը» գրում է,«Թիւրքիան պէտք է ընտրութիւն անէ մի կողմից Գերմանիայի, իսկ միւս կողմից՝ Ռուսաստանի և Ֆրանսիայի միջև։ Վերջին դէպքում Թիւրքիային կերաշխաւորվի անկախութիւն, ֆինանսական օգնութիւն և ազատագրումն Գերմանիայի անտեսական լծից։ Հակառակ դէպքում դաշնակիցներն իրանց ռազմի ոյժերը կը գործադրեն Թիւրքիայի դէմ»։

◆ «Р. Сл.»-ին հեռագրում են Կ. Պօլսից, որ երրեակ համաձայնութեան պետութիւնները յայտնել են, թէ մաքսերը աւելացնելու դէպքում նրանք կը գրաւեն Յաֆֆան, Բէյրութը և Ալէքսանդրէտը։

ՏԵՍԱԿՑՈՒԹԻՒՆ ԿԱՊԻՏԱՆ ԲՈՂԴԱՆ ԲԱՂԴԱՍԱՐԵԱՆԻ ՀԵՏ

Տեղիս զօրագնդի հրամանատարի օգնական կապիտան Բողդան Բաղդասարեանը, որ արդէն օգոստոսի 7-ից իր գնդով մասնակցում էր ռուս-աւստրիական սահմանի վրա տեղի ունեցող ռազմական գործողութիւններին և պատերազմի դաշտում վիրաւորվել էր ձախ թևից նոյն ամսի 19-ին, օգոստոսի 27-ին ժամանեց Թէոդոսիա։

Կապիտանը բնիկ վլադիկավկազցի է և համեստ առևտրով պարապող ծնողների զաւակ. Նա իր սկզբնական կրթութիւնն ստացել է տեղական գիմնազիայում, ապա մտել զինուորական դպրոց, որի ընթացքը աւարտելուց յետոյ՝ ահա 27 տարի է, ինչ գտնվում է զինուորական ծառայութեան մէջ, իսկ մօտ 15 տարի է, որ ապրում է Թէոդոսիայում՝ նշանակված լինելով տեղական զօրագնդի ընդհանուր-հրամանատարի օգնական՝ կապիտանի աստիճանով։ Նա յայտնի նշանառու է ու հրացանաձիգ, որի համար, ինչպէս և իր մաքուր ու հաւատարիմ ծառայութեան համար վարձատրվել է մի շարք նշանաւոր շքանշանների ու գովասանական թերթի։

Ինչպէս վերևը յիշեցի, կապիտան Բաղդասարեանը Թէոդոսիա ժամանեց օգոստոսի 27-ին։ Արդէն աւելի վաղ՝ նոյն ամսի 22-ին հեռագիրը յայտնել էր մեզ, թէ նա վիրաւորվել է ճակատամարտում։ Նրա ժամանման օրը երեկոյեան տեղիս կայարանում ասեղ ձգելու տեղ չը կար։ Հասարակութիւնը ծովացած սպասում էր կապիտանի երևալուն։ Գնացքը շուտով ժամանեց, և վիրաւոր կապիտանը, նրա զինուոր-ծառայ Յովհ. Եսայեանը—որ նոյնպէս վիրաւորված էր (թեթև) աջ ոտից—ուրիշ երկու վիրաւոր օֆիցէրներ ու մի քանի զինուորներ դուրս եկան առաջին կարգի վագոնից և շրջապատվեցին տեղական օֆիցէրներով, հարազատներով ու ծանօթներով։ Չը նայած որ կապիտանի համար առանձին տեղ էր պատրաստված տեղիս «Եւրօպա» առաջնակարգ հիւրանոցում, բայց նա ցանկութիւն յայտնեց իջևանել իր քենեկալ Մ. Բալաբանեանի տանը։

Սեպտ. 10-ին ես առիթ ունեցայ այցելելու կապիտանին։ Նա սիրով ընդունեց ինձ և հաճութեամբ պատմեց հետևեալը։

⁂

Օգոստ. 7-ին արդէն աւստրիական սահմանագլխումն էինք։ Նոյն ամսի 15-ին ես իմ բանակով գտնվում էի ճաշելու պատրաստութեան մէջ «Գնիլայա-Լիպա» կոչվող գետի այս կողմը, սակայն աւստրիական հողի վրա։ Հէնց այդ ժամանակ մեր գնդի հրամանատարը մի օֆիցէրի միջոցով ինձ յայտնում է, որ թշնամին մեզ շրջապատել է։ Ես իսկոյն նշան եմ տալիս, յայտարարելով սպասվող վտանգի մասին։ Բանակս իսկոյն դիմում է զէնքի։ Մի րոպէի մէջ ամեն ինչ պատրաստ էր։

Բարձրանում ենք այն փոքրիկ բլուրը, որի ստորոտում պիտի հանգիստ ճաշէինք։ Ես հեռադիտակով նկատեցի 3 հոգի, որոնցից մէկը սպիտակ էր հագնված, և կանգնած էին մեզնից մօտ 400 քայլ հեռու։ Ըստ երևոյթին նրանք էլ մեզ նկատեցին։ Յանկարծ նրանք շատացան։ Ես այս համարելով ապագայ մեծ ճակատամարտի նախատօնակը՝ հրամայեցի իմ 300-անոց բանակին կրակել։ Թշնամին պատասխանեց մեզ կրակով։ Մինչ այդ՝ մեր մեծ բանակը երկու մասի բաժանված գտնվում էր մեր աջ և ձախ կողմերում մեզնից երկու վերստ հեռու։ Մեր այս ընդհարումը քանի գնաց՝ տաքացաւ և կատարեալ պատերազմի կերպարանք ստացաւ։

Մինչ այդ՝ մենք ունեցանք 9 վիրաւոր, որոնցից 3-ը մեռան։ Թշնամու թիւը հասնում էր մօտ 400-ի, բայց նրա կորուստի մասին մեզ դեռ ոչինչ յայտնի չէր։ Միայն թէ մենք տեսնում էինք, որ յաղթութիւնը մեր կողմն է։

Ժամ ու կէսից աւել տևող հրացանաձգութիւնից յետոյ՝ թշնամու կողմից այն սպիտակ զգեստ հագած կապիտանը բարձրացրեց սպիտակ դրօշակ, որը անձնատուր լինելու նշան էր։ Իսկոյն դադարեցնել տուի հրացանաձգութիւնը և զինուորներին յայտարարեցի, որ ազատ են, կարող են ծխել և այլն, իսկ մի քանիսն էլ զբաղված էին մեր վիրաւորներին շարժական հիւանդանոց փոխադրելու գործով, որը հաստատված էր մեր ետևում՝ սահմանագլխի վրա։

Սակայն շատ շուտ նկատեցի, որ մեր զինուորներից ընկնում են։ Անձնատուր լինող թշնամին՝ օգտվելով մեր միրող դրութիւնից՝ կրակ բաց արեց մեզ վրա։ Անմիջապէս նշան տուի, և մեր բանակն արդէն պատրաստ էր։ Հէնց այդ միջոցին իմ աջ կողմից քաջարի կռւող Մովսէս Ոսկանեանը վիրաւորվեց և ընկաւ։ Այդ անվեհեր մարտիկն մի երկու խրախուսական խօսքերով համբուրեցի և վերցրի նրա հրացանը։ Արձակած հէնց առաջին գնդակից ընկաւ այն սպիտակ հագած կապիտանը։

Ես դարձայ իմ զինուորներին բղաւելով.

— Սիրելի զինուորներս, արշաւեցէք առաջ։

Թշնամուն հալածեցինք մօտ 10 վերստ, և նա ապաստանեց անտառում։ Մենք բացի սպանվածներից և վիրաւորներից վերցրինք 10-ից աւելի գերիներ։

Ամսի 16-ի առաւօտեան եկաւ մեր գլխաւոր հրամանատարը և գրկախառնվեց ինձ հետ։ Միասին հաշւեցինք թշնամու կորուստը, որ էր 65 մեռած, մօտ 40 վիրաւոր և 10-ից աւելի գերիներ։ Զինուորներս միաձայն վկայում էին, որ իմ արձակած գնդակներից ընկել են այն կապիտանը, 3 օֆիցէր, 8 առաջնակարգ հրացանաձիգ ունտէր-օֆիցէրներ և մի քանի հասարակ զինուորներ։ Ես աշխատում էի խփել օֆիցէրներին։ Իսկ մենք այդ կռւում կորցրինք 30-ից աւելի, որոնց թւում հայերից սպանվեցին՝ Բաբայեան, Դանիէլեան, ունտէր-օֆիցէր վիրաւոր Մխիթարեան, Եսայեան, Ոսկանեան, Մովսէս Ոսկանեան, վիրաւոր Գասպարեան. մնաց առողջ Մելքումեան։ (Երբ խօսակիցս կարդում էր իր գնդի վիրաւորների ու մահացածների ցուցակը, չը կարողացաւ զսպել փղձկումը և արտասւեց. Նա չէր կարողանում մոռացութեան տալ Մովսէս Ոսկանեանին)։

16-ի գիշերը մեր գունդը միացած էր գլխաւոր բանակի հետ։ Առաւօտեան, դեռ լոյսը չը բացված, մեզանում հրաման ստացվեց, որ բոլոր գնդերը միանան, որովհետև տեղի է ունենալու մեծ ճակատամարտ։

Ժամը 11-ին արդէն մեր հարիւր հազարանոց բանակը սկսեց կրակել՝ նոյն չափից աւելի աւստրիական բանակի վրա։ Այդ օրը մինչև երեկոյ սոսկալի էր ճակատամարտը, երկու կողմից էլ կորուստը մեծ։

Օգոստ. 18-ին մենք վերցրինք Լվովի գլխաւոր ամրութիւնները, մեծ քանակութեամբ մթերքներ և ոսկի։

Իսկ 19-ին կռւում էինք Գնիլայա-Լիպա գետի այս կողմից։ Հէնց այդ ժամանակ լսեցի իմ ծառայ Յովհ. Եսայեանի՝

— Աղա ես էլ ընկայ,—հայերէն խօսքերը։

Թէև նրան արգելված էր կռւին մասնակցել, քանի որ նրան պատուիրված է միմիայն հսկել իմ իրերի վրա, սակայն նրա տիրասիրութիւնը թոյլ չէր տուել ինձանից բաժանվելու։ Ես գրկեցի նրան և համբուրեցի ճակատից։ Վէրքը աջ ոտից էր և անվտանգ։ Իսկոյն ուղարկել տուի նրան հիւանդանոց։ Իսկ մենք շարունակեցինք կռւել գետի միջից։

Թշնամին պարտվեց և փախուստի դիմեց։

Աւելի քան երկու ժամ գետի միջից էինք պատերազմում. և երբ անցանք միւս ափը, ես սաստիկ ցաւ զգացի ձախ թևիցս։ Մինչև այդ րօպէն ես ոչինչ չէի զգում։ Գնդակը ինձ կպել էր երկու ժամ առաջ, բայց ջրի մէջ երկար մնալուց սառել էր վէրքս, և ես կատարեալ արիւնաքամ էի եղել, և միւս ափում այլևս չը կարողացայ շարունակել և ընկայ անզգայ։

Այդ ժամանակ մեր բանակը մեծ աջողութեամբ ու քաջութեամբ հալածում էր թշնամուն։

Իմ ընկնելը նկատելով՝ մեր զինուոր հրէայ Կրինգելը՝ անմիջապէս մօտեցաւ ինձ, բաց արաւ թևս, վէրքս կապեց և ինձ հասցրեց հիւանդանոց։ Նրա այդ աստիճան բարի վերաբերմունքը թէ ինձ և թէ ուրիշներին առանձին հիացմունք պատճառեց։

Պէտք է միջանկեալ ասեմ, որ առհասարակ ինչպէս ռուսները, նոյնպէս և հայ ու հրէայ զինուորներն անօրինակ քաջութեամբ և վերին աստիճանի ոգևորված են կռւում։

⁂

Կապիտան Բաղդասարեանը վիրաւորվել է ձախ ձեռքի թևի մօտից։ Գնդակը մտել է այդտեղից և դուրս եկել ուսի մօտից, կտրելով թևի ջղերը։

Խօսակցիս պատմածներից երևաց, որ աւստրիական գերիները երկար վախենալիս են եղել, թէ ռուսները նրանց կը գնդակահարեն։

Կապիտանն ափսոսանք յայտնեց, որ իրան բերել են այստեղ, մինչդեռ ինքը պատերազմի դաշտում աւելի շուտ կը լաւանար, և մեր տեսակցութիւնը փակեց հետևեալ խօսքերով.

— Բայց միևնոյնն է։ Հէնց որ լաւանամ, դարձեալ գնալու եմ պատերազմի դաշտ։

Կիւրեղ ս. Արզարեան

Թէոդոսիա

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

—o—

ԱՍՆԵՔ ՄԵՐ ԱՍԵԼԻՔԸ

—

— Ներկայ պատերազմը քաղաքակրթութեան, իրաւունքի և ճնշված ազգերի պատերազմ է անիրաւութեան, անխղճութեան և բռնակալութեան դէմ։

Այսպէս են ասում անգլիական պաշտօնական և ոչ-պաշտօնական մարմինները, երբ հարկաւոր է լինում բացատրութիւն տալու, թէ ինչու Մեծն Բրիտանիան միլիոնաւոր զօրք է պատրաստում ցամաքն ուղարկելու։ Նոյնն են կրկնում և ֆրանսիական պետութիւնը, պարլամենտը, մամուլը։ Եւ ամենից առաջ, ամենից ահեղ հնչեց այդ մասին ռուսական յաղթական բանակը իր Գերագոյն Հրամանատարի պատմական անմահ կոչով լեհացիներին։

Արդ, քանի որ այդպէս է, քանի որ մեծ ազգերի ձայնը փոքր ազգերի համար ամենազօր է, աւելի քան արժանի խորին հա-

ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԲՈՒԺԵԼՈՒ ՆՈՐ ՄԻՋՈՑ

Մեր ժամանակի երկու յայտնի հեղինակութիւններ՝ անգլիացի Հէյգը և ֆրանսիացի Բրօուն-Սէկարը արտասանել են իրանց «նոր խօսքը» հիւանդութիւնների բուժման մասին։

Պրոֆ. Հէյգը իր փայլուն աշխատասիրութեամբ՝ «Միզային Թթւուտը որպէս խրոնիքական հիւանդութիւնների հիմնական պատճառ» խորագրով՝ անհերքելի կերպով ապացուցել է, որ բազմաթիւ և զանազան հիւանդութիւնները, որոնց ենթակայ է մարդը, շատ վրա հասնող զառամութիւնը եւ մինչեւ անգամ մահը առաջ են գալիս նրանից, որ օրգանիզմը պարունակում է իր մէջ մեծ քանակութեամբ միզային թթւուտ։

Փորձական նորագոյն հետազօտութիւններով ապացուցված է, որ մեր ներկայ ժամանակի կուլտուրական մարդը չափազանց շատ է այնպիսի կերակուր գործածում, որ պարունակում է իր մէջ թթւաստր տարրեր (միս, ձուկ, սուրճ, շօկօլադ, կակաօ և այլն)։

Քանի օրգանիզմը ջահել է և առողջ, նա կարողանում է առանձին թթւուտների եւ ֆերմենտների օգնութեամբ, որ առաջ են գալիս նրա սերմնային գեղձերից և անցնում արեան մէջ, թթւեցնել թունաւոր պուրինները եւ դուրս վանել նրանց երիկամունքների միջոցով։ Բայց հէնց որ օրգանիզմի ֆունկցիաները թուլանում են, որ նկատելի է հիւանդութիւնների կամ ծերութեան ժամանակ, այդ դէպքում թուլանում է նաեւ սերմնային գեղձերի գործունէութիւնը և նուազում է կամ բոլորովին սպառվում այդ գեղձերից դէպի արեան մէջն անցնող փրկարար թթւուտն ու ֆերմենտը, որի հետևանքը լինում է այն, որ արեան մէջ առատանում են պուրինները, որոնցից և առաջանում է միզային թթւուտը։

Միւս գիտնականը՝ պրոֆ. Բրօուն Սէկարը՝ իր աշխատասիրութիւններով և բազմաթիւ դիտողութիւններով թէ իր վրա և թէ իր հիւանդների վրա՝ ոչ պակաս փայլուն կերպով ապացուցել է, որ «կենդանիների սերմնային գեղձերից հանված հիւթը պարունակում է իր մէջ հէնց այն թթւուտներն ու ֆերմենտները, որոնք բացակայում են ծերերի, հիւանդների և թուլակազմների արեան միջից, և որ այդ հիւթը, մուտք գործելով արեան մէջ արագացնում է նիւթերի փոխանակութիւնը, հալեցնում և ոչնչացնում է պուրիններն ու միզային թթւուտը, այսինքն՝ անհետացնում է խրոնիքական հիւանդութիւնների պատճառները և օրգանիզմը դնում է վերածնութեան բնական շաւղի վրա»։

Այժմ միայն յայտնի է բժիշկների շրջանում եղած այն աջողութիւնը, որ ունի կենդանիների սերմնային գեղձերից պատրաստված հիւթը—Դ. ԿԱԼԵՆԻՉԵՆԿՕՅԻ լաբորատորիայից։ Արդէն 3000-ից աւելի բժիշկներ նշանակում են Դ. ԿԱԼԵՆԻՉԵՆԿՕՅԻ լաբորատորիայում պատրաստված սերմնային հիւթը այնպիսի հիւանդութիւնների ժամանակ, որոնք առաջանում են օրգանիզմի մէջ պուրինները և միզային թթւուտը կուտակվելուց, այն է՝ նէվրաստէնիայի, իստէրիայի, նէվրալգիայի, էպիլէպսիայի, սեռական թուլութեան, զառամութեան, արեան պակասութեան, հոդացաւութեան եւ բոլի, կաթւածի, պօդագրայի եւ յօդացաւի, շաքարահիւանդութեան, դիաբէտի, տուբերկուլոզի, բրօնխիտի, արտէրիօսկլէրօզի եւ գիրութեան, գլխացաւի եւ անքնութեան, ողնուղեղի հիւծման, մարսողութեան եւ սրտի գործունէութեան անկանոնութեան, տիֆից, քութէշից, դիֆթերիտից, սիֆիլիսից, ծննդաբերութիւնից, անդամահատութիւնից առաջացած թուլութեան և այլ հիւանդութիւնների ժամանակ։

Դ. ԿԱԼԵՆԻՉԵՆԿՕՅԻ լաբորատորիայի սերմնային հիւթի բուժիչ նշանակութիւնը, բժիշկների կարծիքով, ԽՈՇՈՐ է, որ երևում է հետևեալ դիտողութիւններից։

Պ. Պ. ԲԺԻՇԿՆԵՐԻ ԴԻՏՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԸ

1) Ներքին հիւանդ. կաֆէդրայի պատկառելի պրոֆ. Ա. Մ. ՇԻՏԼՕՎԻ դիտողութիւնը։ Խարկով, Գոգոլի փողոց № 6.

«Չափազանց շնորհակալ եմ Ձեզանից Ձեր հիանալի պրէպարատն (սերմնային հիւթ՝ Դ. Կալենիչենկօյի լաբոր.) ինձ ուղարկելու համար։ Թէ ես և թէ իմ եղբօր-որդին լաւ հետևանքներ ունեցանք։ Մէկ և կէս ամսվայ ընթացքում իմ մկանային ոյժերս ըստ դինամէտրի աւելացան մինչև 4 կիլօ (տարիքս 76 է), տրամադրութիւնս ակներեւ փոխվեց դէպի լաւը, ախորժակս բաւականին աւելացաւ։ Մի ամսից յետոյ, եղբօր-որդուս հազը և խորխը դադարեց, ոյժերը բաւականին աւելացան։ Այս հիւանդները, որոնց խորհուրդ էի տուել Ձեր պրէպարատը գործածել, շատ գոհ մնացին։ Ես իմ կնոջս բժշկում էի Սպերմին-Պէլով, սակայն հետևանքները բացասական եղան»։

Բժշկապետ Կ. ՇՋԵԿԻՆԻ (Խարկովի համալսար. ախտաբան) դիտողութիւնը։

«Ես ունէի ստամոքսի կատառը և 4—5 օր շարունակվող կապութիւն։ Բժշկական ոչ մի միջոց ինձ չօգնեց. բայց հէնց որ սկսեցի ընդունել սերմնային գեղձերից պատրաստված հիւթը, մինչև երկու շաբաթը կանոնաւորվեց իմ ստամոքսը, և այժմ ամեն օր կատարում եմ իմ բնական պահանջը։ Երբ ես ժամանեցի Յալտա, իմ մարմնի կշիռը 3 պուդ 20 ֆունտ էր. իսկ այժմ՝ 3 պուդ $28\frac{3}{4}$ ֆունտ է։ Կլիմայական ոչ մի պայման առաջին երկու ամսում ինձ ոչինչ չօգնեց, այլ, ընդհակառակն, ես աւելի թոյլ էի զգում ինձ և նիհարում էի. բայց հէնց որ սկսեցի խմել Ձեր դեղը, երեք շաբաթից յետոյ ես ինձ 60 տարով ջահել էի զգում (ինքս 60 տարեկան եմ)»։

3) Բժշկ. Ա. Մ. ԿՇԱՆՕՎՍԿԻԻ դիտողութիւնը։ Կաժդանի գիւղ, Նովօվիլէյսկի գաւառ, Վիլն. նահանգ։

ա) «Մի 47 տար. հիւանդ, թոքախտաւոր, գտնվում էր մահվան ճիրաններում։ Երկրորդ սրւակ դեղը ընդունելուց յետոյ հիւանդը բոլորովին վերակենդանացաւ, թոքերի թարախային պալարներն սպիներով ծածկվեցին, և քննելիս սարսափելի հիւանդութեան ախտանշանները այլևս չէին նկատվում։ Թէ ես և թէ իմ պաշտօնակիցները հիացած ենք Ձեր դեղի փայլուն հետևանքներից»։

բ) «Մի պառաւ կալուածատիրուհի, որ հիւանդ էր յօդացաւով և ջրգողութեամբ, այդ դեղից երկու սրւակ ընդունելուց յետոյ՝ կարողանում է երկարատև զբօսնել։ Ուռոյցքները չքացել են, նոյնպէս և՝ բոլոր յօդային ցաւերը։ Իրան 20 տարով ջահելացած է զգում»։

գ) «Մի քահանայ, 52 տարեկան, որ հալումաշ էր եղել մալարիայից, մի սրւակ ընդունելուց յետոյ առողջացաւ։ Ամեն ինչ փորձել էր, սակայն անօգուտ. իսկ 3 շաբաթւայ ընթացքում, այն էլ մի սրւակ ընդունելով, մարդը վերականգնեց իր առողջութիւնը»։

«Ես գնում եմ Բերլին և Պարիզ, ուր Բժշկ. Ընկ. մէջ պիտի զեկուցում կարդամ իմ փորձերի մասին՝ Դ. Կալենիչենկօյի սերմնային գեղձերից պատրաստված հիւթի վերաբերմամբ»։

4) Բժ. Կ. ԲԵՆՏԿՕՎՍԿԻԻ դիտողութիւնը. Պոլտավա։

«Ինքս ընդունելով Դ. Կալենիչենկօյի «սերմնային հիւթը» օրական 2 անգամ, 30 կաթիլից, նկատեցի իմ մէջ ակնյայտ փոփոխութիւն դէպի լաւը։ Ման գալ կարողանում եմ երեք անգամ աւելի, քան առաջ էր։ Առաջները իմ փորձած սպէրմինը այդ աջողութիւնը երբէք չունեցաւ։ Իրաւ որ սերմնային հիւթը արագացնում է մարդու օրգանիզմի մէջ գտնված միզային աղերի նուազումը, որը ես նկատել եմ իմ մէզը անալիզի ենթարկելով»։

5) Բժ. Պ. Ա. ԱՆՏԻՊԻՆԻ դիտողութիւնը։ Դէգտևկէ կայար., Մ.-Վ.-Ր. երկաթուղի։

«Մի վարժուհի 28 տար. (Ս. Պ.) ունեցել էր թոքերի բորբոքում, մի տարուց յետոյ՝ տիֆ, որից յետոյ տեղի էր ունեցել ուժեղ անէմիա և թուլակազմութիւն։ Հիւանդը ամբողջ երկու ամիս պառկած էր անկողնում, և ոչ մի դեղ չէր օգնում նրան։ Մէկ խորանարդ մլ. արեան մէջ ես խոշորացոյցով գտայ 3.700.000 կարմիր գնդակներ։ Իսկոյն ես գրեցի նրան դեղատոմս՝ գործածելու սերմնային գեղձերից քամված հիւթ, և չորս սրւակ ընդունելուց յետոյ հիւանդի անէմիան սկսեց արագաքայլ անհետանալ։ Վեց սրւակից յետոյ ես հաշւեցի նրա արեան կարմիր գնդակները և գտայ 6.300.000 հատ։ Հիւանդի ոյժերը այնքան վերականգնվեցին, որ նա կարող է այժմ պարապել աշակերտների հետ։ Ուշադրութեամբ քննելով և ուսումնասիրելով պրէպարատը, ես կարող եմ համարձակ ասել, որ դա ամենալաւ և ուժեղ դեղ է շատ հիւանդութիւնների դէմ»։

6) Նովգորոդի զինուոր. հիւանդ. աւագ-բժիշկ ՏԱԼԻՉԻՆԻ դիտողութիւնը։

«Մօտ 70 տարեկան մի պառաւ կին հիւանդ էր ամբողջ երկու տարի խրօնիքական յօդացաւով։ Երկարատև հիւանդութիւնը և զառամութիւնը հիւանդին կատարեալ կմախք էին դարձրել։ Հիւանդը մի տարուց աւելի պառկած էր անկողնի մէջ։ Չորս ամիս անցնելուց յետոյ, երբ հեղուկ դեղի ամբողջ պաշարը նա ընդունեց, հիւանդը կարողացաւ ոտքի կանգնել և ազատ ման գալ սենեակում»։

7) Վարշավայի մանկ. հիւանդ. աւագ-բժիշկ Ա. ԻՍՐԻՄԱՆՍԿԻԻ դիտողութիւնը։

«Գ. Դ., ոսկրացաւով բռնված մի ծերունի, որի ձեռքերի մատները վերջերս սկսել էին սաստիկ ցաւեր զգալ, Ձեր դեղից երկու սրւակ ընդունելուց յետոյ՝ ցաւերը նուազեցին և ոտները սկսեցին ազատ շարժումներ անել։ Բայց գլխաւորն այն է, որ մէզի մէջ եղած միզային թթւուտը, որի վերջին անալիզը ցոյց էր տուել հազարին (pro mille) 4,27, գտնվում էր հալված դրութեան մէջ, այնպէս որ խոշորացոյցով քննելիս հազիւ մի քանի բիւրեղիկներ էին նկատվում»։

8) Բժ. Վ. ՄԱՏՈՒՍԵՎԻՉԻ (Լուբնա) դիտողութիւնը։

«Մի հիւանդ, 26 տարեկան, նեղ կրծքով, թուլակազմ, որ մի քանի անգամ արիւն էր թքել, ախորժակը վատ, թախծոտ, իր հիւանդութեան (թոքախտ) վատ հետևանքները նախազգացող, բժշկվում էր ինձ մօտ։ Ես նշանակեցի նրան ընդունել Դ. Կալենիչենկօյի լաբորատորիայում պատրաստված սերմնային գեղձերից քամված հիւթից։ Հիւանդի ախորժակը բացվեց, տրամադրութիւնը օրէ-օր լաւացաւ։ Մինչև երկու շաբաթը երիտասարդն աշխատել սկսեց։ Մինչև երկու ամիսը նրա մարմնի կշիռը 21 ֆունտով աւելացաւ։ Հազը դադարեց։ Կարող եմ համարձակ անել այս եզրակացութիւնը, որ «սերմնային հիւթը վերականգնում է օրգանիզմի ոյժերը՝ կռւելու վնասակար հիւանդութիւնների դէմ, և այդպիսով՝ այս կամ այն հիւանդութիւնից երերված առողջութիւնը նորից վերականգնում է»։

Հիւանդների անձնական դիտողութիւնները

9) Պ. Իվանով, ծովային տէխնիկ-ջրասոյզ, գնդապետ (Մոսկվա, Մեծ Եակիմանկա)։

«Մարմնիս աջ կողմից ես կաթւած էի ստացել։ Ոչ ոքի չէի ճանաչում և գիտակցութիւնս կորցրել էի։ Իմ պաշտօնակիցներիս թախանձանքը՝ վերյիշել աշխարհիս շուրջը եղած նաւարկութիւնը Թագաժառանգ Ցեսարևիչի—այժմ բարեպաշտ Թագաւորող Կայսեր—հետ՝ ես անկարող էի լինում կատարել։ Ամեն ինչ ինձ համար կորած էր։ Ես սկսեցի ընդունել սերմնային գեղձերից քամված հիւթ։ Եւ այժմ, շնորհիւ Աստուծոյ ողորմութեան, ես ինձ այնպէս առոյգ, կատարելապէս առողջ և ուժեղ եմ զգում, որ բոլոր իմ ծանօթները չեն կարողանում որոշել, թէ մարմնիս որ մասն էր կաթւածի ենթարկված։ Ինձ, ինչպէս ասած, վերադարձել է երկրորդ երիտասարդութիւնը»։

10) Քահանայ Սլաստենով Ա. Վաս. (Մալայա-Կնեազևկա, Ատկարսկ. գաւ., Սարատովի նահ., «Բ. Կօպէնի» կայարան)։

«Իմ փեսայ՝ Ա. Ս. քահանան սաստիկ հիւանդ էր. շարունակ սաստիկ քրտնելուց՝ ամեն օր 3 շապիկ էր փոխում։ Նա այնքան էր թուլացել, որ գլուխը բարձրացնել չէր կարողանում։ Սերմնային գեղձերից քամված հիւթից մի սրւակ ընդունելուց յետոյ հիւանդը իր մէջ սկսեց ոյժ զգալ, ախորժակը բացվեց, սկսեց հանգիստ քնել և շուտով բոլորովին ապաքինվեց։ Այժմ նա իրան այնպէս լաւ է զգում, որ սրանից 10 տարի առաջ էլ այդպէս չէր զգում»։

11) Քահանայ Դ. Րօզով (Պետրովսկ, Ցիլիպովօ-Գօրիայինօվսկի գիւղ)։

«Մի քանի տարի շարունակ ես ունէի մայասիլ հիւանդութիւնը։ Օգոստոս ամսից սկսած ընդունեցի սերմնային գեղձերից քամված հիւթը. այդ օրվանից սկսած արիւնհոսութիւնս դադարեց, կապութիւնս անցաւ և բնական պահանջս կատարվում է կանոնաւոր։ Քունս, ախորժակս և ինքնազգացումս շատ լաւ է»։

12) Տիրացու Ի. Ա. Նարբէկով (Կոստրօմա, գեմստվային պօստ, Վօզնեսենսկի գիւղ)։

«Ես անցեալ ամառ ընդունեցի սերմնային գեղձերից պատրաստված հիւթից 2 սրւակ՝ մարմնիս ձախ կողմում ստացված կաթւածի դէմ։ Ես ինձ այնքան լաւ եմ զգում, որ կարողացայ չորս անգամ գնալ ոտով մինչև Կոստրոմա, 25 վերստ տարածութիւն, և վերադառնալ»։

13) Բէլեակով Միխ. (Աչինկ, Պերմի նահ.)

«Ես հիւանդ էի, ման գալ չէի կարողանում, ցաւում էր թէ կուրծքս և թէ մէջքս։ Երկու ոտս թուլացել էին, այնպէս որ առանց կողմնակի օգնութեան չէի կարողանում անկողնի մէջ շուռ գալ։ Երբ սերմնային հիւթից մի սրւակ խմեցի, ես անկողնից վեր կացայ, և ի զարմանս բոլորի՝ սկսեցի ման գալ, և այժմ զգում եմ, որ ոյժերս վերականգնել են»։

14) Նաւ. Ա. Կվաշուկ (Զերվօննօէ կայարան, Վոլ. նահ.)։

«Ես ձեռների յօդացաւ ունէի, նոյնիսկ չէի կարողանում ծծկեր երեխայիս ձեռներիս վրա պահել, այնպէս որ աղախինս ստիպված էր լինում երեխային գօտիով կապել կրծքիս, որպէսզի կարողանայի կերակրել նրան։ Սերմնային հիւթից երեք սրւակ ընդունելուց յետոյ ես բուժվեցի և մինչև անգամ զգում էի ամբողջ օրգանիզմիս մէջ բարելաւումն»։

15) Ալէքսանդրա Սմիրնովա (Տուլա, Կրիվայա-Բելայեվսկայա փող., տ. Բօրիսովի)։

«Չորս տարի սրանից առաջ ես իմ 7 տարեկան երեխային բժշկեցի սերմնային հիւթով։ Նա սարսափելի բրօնխիտ ունէր։ Երեխան մինչև այն դրութեան հասաւ, որ ման գալ չէր կարողանում, համարեա թէ խեղդվում էր, նիհարում, գունատվում և ոչինչ ուտել չէր կարողանում։ Բժիշկները ասում էին, որ նա ժամանակով թոքախտ պիտի ստանայ։ Ես սկսեցի երեխայիս տալ սերմնային հիւթ, օրական 3 անգամ՝ 7 կաթիլ իւրաքանչիւր անգամը։ Նա դրանից յետոյ սկսեց ուտել, շտապով կազդուրվել, թողեց հազալը, թանչոց բոլորովին չունէր և սկսեց գիրանալ։ Նա մինչև օրս էլ այնպէս գէր է, սովորում է դպրոցում և աւելի առողջ է, քան իր միւս եղբայրները»։

Մնում է ցանկալ, որ բազմաթիւ բժիշկներ և հիւանդներ, որոնք նուազ չափով անգամ կասկածում են Կալենիչենկօյի լաբորատորիայում պատրաստված «սերմնային հիւթի» բուժիչ ազդեցութեան վերաբերմամբ, անձամբ փորձէին այդ պրէպարատը։

Պ. պ. բժիշկներին «Սերմնային հիւթը», Դ. Կալենիչենկօյի լաբոր. պատրաստված դիտողութեան համար ուղարկվում է GRATIS.

ՈՒՂԱՐԿՎՈՒՄ Է ՁՐԻ

Դ. ԿԱԼԵՆԻՉԵՆԿՕՅԻ լաբոր. պատրաստված սերմնային հիւթով բուժումներ անելուն վերաբերեալ ընդարձակ գրականութիւնը (մօտ 400 բժիշկների դիտողութիւններ)։

Դ. ԿԱԼԵՆԻՉԵՆԿՕՅԻ լաբոր. ՍԵՐՄՆԱՅԻՆ ՀԻՒԹԻ մի սրւակը արժէ 2 ր. 50 կ.։ Ճանապարհածախսը (կարելի է և վերադիր վճ.)—40 կ.։ Մի սրւակից աւել պատուիրողները ճանապարհածախսը չեն վճարում։

Հասցէն՝ Органотерапевтическая лабораторія Д. Калениченко, Москва, Козловскій пер. соб. д., № 10, кв. 267.

(М. 255913) 4—4

ւատի, քանի որ մեծի հանդիսաւոր խօստումը փոքրի համար չէ կարող չը լինել անխախտելի և սուրբ, մնում է, որ իւրաքանչիւր ճնշուած ու հալածուած ազգ ասպարէզ գայ և բաց անելով իր կուրծքը, ցոյց տալով իր վէրքերը ազատարարներին ասէ.

— Դուք տառապեալների համար էք կռւում, ահա, նայեցէք, ես ես տառապեալ եմ, ես ես տանջվել, հալածվել, ես ես արժանի եմ ձեր ուշադրութեանը։

Եւ ո՞ր ազգն է աւելի հարուածներ կրել, որի իրաւունքներն են այնքան ոտնակոխ եղել, որի սրբութիւններն են այնպէս սրբապղծվել, որի կանայք են այնչափ բռնաբարվել, որի երեխաներն են այնքան սրախողխող եղել, որի պատմութիւնն ունի այնչափ արիւնոտ էջեր, և, վերջապէս, ո՞ր ազգն է այնքան կռւել իր թոյլ ույժերով քրիստոնէութեան, արդարութեան, իրաւունքի և քաղաքակրթութեան համար, որքան հայ ազգը։

Այո, ոչ մի ազգ այնքան, որքան հայ ազգը։ Թող ազատարարները չը մտնեն պատմութեան խորքերը, կարիք չը կայ. մեր բազմաչարչար մարմնից հոսած արիւնը դեռ շատ թարմ է, դեռ նրա շոգին չէ չքացել։

Եւ մենք պիտի բաց անենք մեր կուրծքը, ցոյց տանք ազատարարներին մեր վէրքերը և պահանջենք այն վարձը, որ վաղուց ենք վաստակել ոչ միայն մեր արիւնով, այլ և քրիստոնէութեանն ու ժամանակակից քաղաքակրթութեանն արած ծառայութիւններով։ Ողորմութիւն։ Ոչ, մենք արհամարհում ենք մուրացկանութիւնը, մենք պիտի պահանջենք իրաւունքի գնահատութիւն, դառն աշխատանքի վարձատրութիւն։ Մենք պիտի ասենք, որ եթէ կայ մի ազգ, որ ամենից աւելի է ընդունակ ժամանակակից եւրոպական քաղաքակրթութիւնը խաւար Ասիայի խորքերում տարածելու, այդ մենք ենք։ Մենք պիտի ապացուցանենք, որ եթէ կայ ասիական փոքր ազգերի մէջ մէկը, որ ամենից աշխատասէրն է, ամենից բարոյականը, ամենից տոկունը, ամենից զօրեղը, ամենից քաղաքակիրթը, այդ մենք ենք։ Այդ մենք կարող ենք ապացուցանել ոչ լոկ խօսքերով, ոչ մնապարծութեամբ, այլ կենդանի փաստերով, մեր ստեղծագործական տաղանդով, մեր անհուն սիրով դէպի գիտութիւնները, մեր առևտրական և արդիւնաբերական ձիրքերով և, վերջապէս, մեր հոգու և մարմնի եռանդով ու կորովով։

Կեղծ համեստութիւնը նոյնքան դատապարտելի է, որքան անհամեստութիւնը։ Մենք երբէք չենք լինի անհամեստ, եթէ պահանջենք այն, ինչ որ իրաւունք ունենք պահանջելու—Թիւրքահայաստանի կատարեալ անկախութիւնը։ Այո, կատարեալ, որովհետև աղաղակող փաստերը բիւր անգամ ապացուցեցին, որ մեր ճակատագիրը երբէք և երբէք չէ կարող հաշտվել Թիւրքաց իշխանութեան հետ, որ մենք և նրանք տրամագծօրէն հակառակ տարրեր ենք, որ Թիւրքը միանգամայն անընդունակ է ժամանակակից կուլտուրայի, իսկ մեր միակ տենչը հէնց այդ կուլտուրան է, նրա համար ենք ուզում ապրել և նրա համար էլ պատրաստ ենք մեռնել։

Ասենք մեր ասելիքը աներկիւղ։

Շիրվանզադէ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԹԻՖԼԻՍ

◆ Կովկասի քաղաքագլուխների՝ փոխարքայի միջոցով Թագաւոր Կայսրին ուղարկած հեռագրին ի պատասխան Թագաւոր Կայսրից ստացվել է հետևեալ հեռագիրը.

Յանձնարարում եմ ձեզ, կոմս, Կովկասի քաղաքներից համագումարի եկած ներկայացուցիչներին յայտնել Իմ սրտագին շնորհակալութիւնը նրանց Ինձ արտայայտած հաւատարիմ հպատակութեան զգացմունքների համար։ Հոգով ցանկանում եմ համագումարին աջողութիւն մեր պանծալի վիրաւոր զօրականներին օգնութիւն կազմակերպելու գործում։ ՆԻԿՈԼԱՅ։

◆ Այսօր, եր. ժ. 8-ին, Կ. Հ. Բար. Ընկ. դահլիճում կայանալու է մի ժողով, բաղկացած հայկական բոլոր կուլտուրական-բարեգործական հիմնարկութիւնների երկու-երկու ներկայացուցիչներից։ Ժողովը, համաձայն սեպտեմբերի 14-ին կայացած համագումարի որոշման, պէտք է ընտրէ վիրաւորված զինւորների և պահեստի զինւորների ընտանիքներին օգնող կենտրոնական կոմիտէի համար 12 անդամ։

◆ «Դրօշակների օր» կազմակերպող բիւրօն խնդրում է կառավարչական, հասարակական և մասնաւոր հիմնարկութիւններին հնարաւոր աջակցութիւնը ցոյց տալ փոքրիկ դրօշակներ վաճառողներին, որոնք յիշեալ հիմնարկութիւնները և վայրերը մտնելու իրաւունքի հաստատած թղթեր կունենան։ Բացի այդ անձերից յիշեալ տեղերը մտնել ոչ ոքի չէ թոյլատրվում։ Բիւրօն խնդրում է նոյնպէս, որ մօտային խանութները իրանց ցուցատեղերում ի ցոյց դնեն եռագոյն զարդարանքներ։

◆ Սեպտեմբերի 22-ին, երկուշաբթի, ժ. 12-ին, Երևանեան հրապարակում տեղի կունենայ հոգեհանգիստ պատերազմի դաշտում ընկած զօրականների համար։ Հոգեհանգստից յետոյ կը կատարվի մաղթանք ռուսաց զէնքի յաղթութեան համար։

◆ Կովկասի քաղաքների միութեան բիւրօն հարցրել է համառուսական քաղաքների միութեան գլխաւոր լիազօրներին, թէ որքան սպիտակեղէն կարելի է պատրաստել Մոսկվայում Թիֆլիսի հիւանդանոցների համար։

◆ Մի շարք մասնաւոր մարդիկ ցանկութիւն են յայտնել քաղաքային կենտրոնական կոմիտէտին, որ իրանք իրանց հաշւով պատրաստ են պահել 90 վիրաւոր։

◆ Եղբ. Ա. և Ա. Միլեանները Նորին Մեծութիւն Թագուհի Կայսրուհու պահեստին նուիրել են 2000 արշին վիրակապի կտոր։

◆ Թայիրեանի և Ալիխանեանի սապոնի գործարանը պատերազմից վիրաւորվածներին օգնող քաղ. կոմիտէտին նուիրել է 18 պուդ ընտիր սապոն։

◆ Սեպտեմբերի 19-ին պետական գանձարանը քաղաքային գանձարկղին է յանձնել 24,648 ռուբ. պահեստիների ընտանիքներին բաժանելու որպէս նպաստ։

◆ Սեպտեմբերի 1-ից քաղաքային հիւանդանոցներից քաղաքային գանձարանը ստացել է 7947 ռ. 35 կ. տուրք։

◆ Այսօր, կիրակի, սեպտ. 21-ին նշանակված է կանանց 4-րդ գիմնազիայի աշակերտուհիների ծնողների ժողովը ծնողական միութեան խորհուրդ ընտրելու համար։

◆ Այսօրվանից գործադրվելու է նամակների, հեռագիրների և պօստային այլ առաքումների վրա սահմանված նոր բարձրացրած տարիֆը։

◆ Պահեստիների ընտանիքներին նպաստներ բաժանող մասնաժողովը այսուհետև նպաստները բաժանելու է Վելիամինօվսկայա փողոցի № 7 տանը։

◆ Սեպտեմբերի 25-ին նշանակված է հին սպանդանոցի շէնքը ծախելու աճուրդը։ Շէնքը գնահատված է 5000 ռ.։

◆ Վրաց պտղաբուծական ընկ. անդամները կազմել են մի առանձին կոմիտէտ, որը վիրաւոր զօրականների համար հաւաքելու է գիւղատնտեսական մթերքներ։ Կոմիտէտի կազմի մէջ են մտել Թիֆլիսի այգեգործական դպրոցի մանկավարժական խորհրդի անդամները։ Նուիրաբերութիւնները Թիֆլիսում ընդունվում են այգեգործական դպրոցում։ Ինքը դպրոցը 100 շիշ կարմիր գինի է նուիրել հիւանդների համար։

◆ Վերջին օրերս եղանակը սկսեց ցրտել։ Սառը քամիներ են փչում առաւօտից մինչև երեկոյ։

ԿՈՎԿԱՍ

◆ Իօրիի հովիտում խաղողի բերքը այս տարի, ինչպէս երևում է նշաններից, շատ վատ է լինելու։

◆ Շուլավէրում, շուկայի մէջ, անյայտ մարդու ձեռքով սպանվեց տեղացի Գ. Բաղեանը։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

Ուրմի, 26 օգոստ.

Այստեղ Թիւրքաց հիւպատոսը շատ նեղն է դրել օսմ. հպատակներին՝ կամ զինւոր գնալ և կամ 43 ոսկի վճարել. Նրանք էլ ոչ կարող են վճարել և ոչ էլ հնարաւորութիւն ունեն իրանց ընտանիքը թողնելու և հեռանալու։

Վերջերս քաղաք են մտնում մի խումբ արաբներ՝ իբր առևտրական նպատակով. Նրանցից մէկին ռուսների կարգադրութեամբ ձերբակալում է պարսից կառավարութիւնը ու պահում։ Արաբները պահանջում են իրանց մարդուն, բայց ի զուր են անցնում նրանց գործ դրած միջոցները։ Դիմում են Թիւրքաց հիւպատոսին, սա անմիջապէս գնում է դատաւոր Էյթիմադ-ուդ-Դովլէի մօտ և պահանջում իր հպատակին. դատաւորը մերժում է։ Պաշտօնական խօսակցութիւնները ստանում են լուրջ կերպարանք, մինչև այն աստիճան, որ հայհոյանքներով իրար սպառնում են, իսկ ներկայ եղող արաբները թափվում են դատաւորի ծառայողների վրա և ծեծում։ Անմիջապէս օգնութեան են հասնում ռուս կօզակներ, որոնք և ցրում են խռնված խուժանը։ Ձերբակալվածը ուղարկվեց Թաւրիզ։

Հ. Ժամկոչ

Խմբագիր-հրատարակիչ՝
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Հաշւապահական Կուրսեր Գ. Կ. ՏԷՐ-ԴԱՒԹԵԱՆԻ
(ա.օ) Նիկօլայէվսկայա փող. 36. 863. 25—10

ԱՌԵՒՏՐԻ ԵՒ ԱՐԴԻՒՆԱԲ. ՄԻՆԻՍՏՐ. ԻՐԱՒԱՍՈՒԹԵԱՆ ՆԵՐՔՈՅ ԳՏՆՎՈՂ
ԱՌԱՋԻՆ
ՀԱՇՒԱՊԱՀԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՔՆԵՐ
Ն. Ռ. ԱԲՐԱՀԱՄԵԱՆԻ
Գոյութիւն ունի 1895 թ.

Հեղինակ առևտրական հաշւապահութեան ձեռնարկի և զանազան մասնագիտական ձեռնարկների։

Տալիս է երկու սեռի անձանց մասնագիտական առևտրական գիտութիւն 4-ԱՄՍԵԱՅ ԴԱՍԸՆԹԱՑՔՈՎ ամենօրեայ պարապմունքներով։

Դասընթացքներում աւանդվում են. պարտադիր—Հաշւապահութիւն կրկնակի իտալ., պարզ, գերմ., ֆրանս., ամերիկ. և ուրիշ սիստեմ. արդիւնաբերութեան զան. ճիւղերի, նաև գործար. և նաւթարդիւն., առևտր. թւաբ., առևտր. թղթակց., քաղաքատնտ., առևտր. իրաւունք., մուրհակի կանոնադր., առևտր. թւաբ. համրիչի վրա և վայելչագր. (ամենավատ ձեռքի ուղղումն.). ոչ պարտադիր—Օտար լեզուներ, սղագրութիւն և ռեմինգտօն։

Նիւթերը մատեանների և գործնական պարապմունքների համար առնվում են ռէալ կեանքից, ինչպէս որ պաշտօնում գտնված դէպքում։

Ուսուցիչները բարձր կրթութիւն ստացած մասնագէտներ են, որոնք գործնականապէս և տեսականապէս պատրաստված են ամեն մի առարկայի համար առանձին։

Ատտեստատներ տրվում են մինիստրութեան թոյլտւութեամբ։

Պարապմունքների սկիզբը սեպտեմբերի 15-ից 1914 թ.։

Խնդրագիրների ընդունելութիւնը օգոստոսի 25-ից, առաւօտեան ժամը 9—11-ը, երեկոյեան 5—7-ը։ Ծրագիրը և կանոնները տրվում և ուղարկվում են ձրիաբար։

Դասընթացքներին կից հաստատված են քիչ պատրաստված անձանց համար առանձին պատրաստական և լրացուցիչ դասարաններ ռուսաց լեզուի և թւաբանութեան համար։

Անձամբ և նամակներով դիմել՝ Тифлисъ, Учредит. Бухг. Курсовъ Н. В. Абраамяну. Николаевская, 22, Телефонъ 7—44. (ե.հ.կ.) 749. 0—19

Լոյս տեսաւ ՉՈՐՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՄԲ և վաճառվում է
ԱՐՏԱՇԷՍ ԱԲԵՂԵԱՆԻ կազմած (ըստ Իվանօվի, Կրուբերի և ուրիշ.)
ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԵԱՆ ԴԱՍԱԳԻՐՔ

Ա. ԳԻՐՔ, երրորդ և չորրորդ տարվայ դասընթաց (համաձայն հայոց դպրոցների ծրագրի) ԳՈՒՆԱՒՈՐ ՔԱՐՏԷԶՆԵՐՈՎ, բազմաթիւ պատկերներով, բացատրական քարտէզիկներով և աշխարհագրական յաւելուածով։ 1) Բնական մաս, 2) Կովկաս, 3) Ռուսաստան, 4) Փոքր Ասիա և Հայաստան, 5) Հինգ աշխարհամասեր, 6) Աշխարհագրական զրոյցներ։ Դասագրքի ներկայ տպագրութեան կցված են 1) Կովկասի, 2) Թիւրքահայաստանի, 3) Եւրոպ. Ռուսաստանի և 4) Կիսագնդերի բազմագոյն քարտէզներ (փորագրութիւն), որոնք միասին առանձին վաճառքի մէջ արժէն 40 կոպէկ։ Դասագիրքը, այդ քարտէզներով միասին, արժէ 60 կոպէկ։

Լոյս են տեսել և վաճառվում են նոյն դասագրքի նաև միւս մասերը.

Բ. ԳԻՐՔ, հինգերորդ տարվայ դասընթաց—Չորս աշխարհամասեր, բազմաթիւ պատկերներով։ Երկրորդ տպագրութիւն. Գինն է 65 կոպէկ։

Գ. ԳԻՐՔ, վեցերորդ տարվայ դասընթաց—Եւրոպա։ Քարտէզներով և բազմաթիւ պատկերներով։ Երկրորդ տպագրութիւն։ Գինն է 70 կոպէկ։

Դ. ԳԻՐՔ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ (Նոր լոյս տեսաւ), վեցերորդ տարվայ դասընթաց։ Բազմաթիւ պատկերներով, Կովկասի և Թիւրքահայաստանի գունաւոր քարտէզներով, այլ և Հին-Հայաստանի, Կիլիկիայի և այլ քարտէզներով։ Գինն է, քարտէզներով միասին, 80 կոպէկ։ Գումարով գնողներին 60 կոպէկ։

Դիմել Թիֆլիսի և գաւառական բոլոր գրախանութներին։ Պահեստը Թիֆլիսի «ԳԻՐ» գրախանութում։ Կազմողի հասցէն՝ Ներսիսեան դպրոց։ (հ. կ.) 831. 6—5

◆ ԼՈՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ ԵՒ ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ ◆
ՆԻԿ. ՍԱՐԳՍԵԱՆԻ
ԲՆԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԴԱՍԱԳՐՔԵՐԸ
Միդասեան դպրոցների համար.
ՄԱՐԴ, ԿԵՆԴԱՆԻՆԵՐ, ԲՈՅՍԵՐ, ՀՈՂ, ՋՈՒՐ ԵՒ ՕԴ
Համաձայն ծխական դպրոցների ուսումն. ծրագրի։ Գինը . . 50 կ.
Երկդասեան դպրոցների համար.
ՄԱՐԴ ԵՒ ԿԵՆԴԱՆԻ . . . . . Գինը . . 60 կ.
ԲՈՅՍ . . . . » . . . 50 կ.
Վերջին դասագրքերը և առաջին դասագրքի կենդանի աշխարհը կազմված են կենսաբանական ուղղութեամբ։
(հ. կ.) 893. 3—1

Վաճառվում է
ՀԱՅՈՑ ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ԸՆԿ. հրատարակած
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ
կազմեց Ա. ՏԷՐ-ՅԱԿՈԲԵԱՆ
300 երես, 64 պատկեր, 5 քարտէզ։ ◆ Գինն է 50 կ., իսկ Ընկերութեան գրասենեակում 35 կ., ճանապարհածախսով՝ 60 կ., վերադիր վճարով՝ 70 կ.։
Դիմել Армянское Этнографическое О-во, Тифлисъ, Лермонтовская 1.
(ե.հ.կ.) 862. 10—5

Ատամնաբուժարան
հիմնված ատամնաբոյժ
Բ. ՀԱՅԿԻՆԱՅԻ
նախաձեռնութեամբ։ Թիֆլիս, Միխայլօվսկի պր. № 76

Բուժարանը բաց է հիւանդների համար օրվայ ու գիշերվայ ամեն ժամին։ Ատամները բուժելու և պլոմբելու համար վճարը ստացվում է ըստ հաստատված սակագնի։

Բուժարանում գործում են 5 բժիշկ-մասնագէտներ, բժ. վիրաբոյժ Ռ. Բ. Պիրադովը (որ ժամանակաւորապէս բացակայ է)։

Բուժարանն ունի կատարելագործված լաբօրատօրիա արհեստական ատամներ պատրաստելու համար։ Կատարվում են ամեն տեսակ ատամնա-տեխնիկական աշխատանքներ և շատ վերանորոգումներ 3 ժամվայ ընթացքում։
(օ. մ.) 755. 100—20

Լոյս տեսաւ և վաճառվում է բոլոր գրախանութներում
ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՒՈՅ ◆◆
◆◆ ՀԱՄԱՌՕՏ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ
ԴԱՍԱԳԻՐՔ
ՅՈՎՀԱՆՆԷՍ ա.-ք. ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆԻ
Չորրորդ տպագրութեամբ՝ բարեփոխած, պատկերազարդ և քարտէզով։
Պահեստը «ԳԻՐ» գրավաճառանոցում։
Գինն է 50 կոպ.։
(կ. ե.) 886. 3—2

Ծախվում են

1) «ՎԵՆԵՐԱԿԱՆ ԵՒ ԳԱՂՏՆԻ ՑԱՒԵՐԻ ԲԺՇԿԱՐԱՆ», նկարներով, բազմաթիւ խորհուրդներով և րեցէպտներով։ Անհրաժեշտ գիրք և պարզ ու հասկանալի գրված ամեն մի չափահասի համար. բազմաթիւ նախազգուշութեան կանոններ տրիպէրով և այլ ցաւերով չը վարակվելու համար։ Գրքի մէջ կայ նաև սուր և խրոնիկական տրիպէրի և բժշկութեան մասին, րեցէպտներով։ Գինը 50 կոպ.։

2) «ՓՈՐՁԱՆՔՆԵՐԻ ԱՌՁԵՒՆ ԲԺՇԿԱՐԱՆ», ամեն տեսակ պատահական փորձանքներ, հիւանդութիւններ, թունաւորութիւններ և նրանց շուտափոյթ օգնելը։ Բազմաթիւ տնային դեղեր և խորհուրդներ։ Շատ պարզ ու հասկանալի լեզուով։ Ամեն մարդու անհրաժեշտ գիրք գրպանի համար, և ամեն մարդ կարող է մեծ օգնութիւն հասցնել թէ իրան և թէ ուրիշներին։ Գինը 30 կոպ.։

3) «ԾԻԾԱՂԻ ՏԿՃՈՐ» ամենալաւ և ծիծաղաշարժ անէկդոտների ու սրախօսութիւնների ժողովածու։ Ծիծաղաշարժ տկճորի պատկերը գրքի երեսին։ Գինը 20 կ.։

Այս երեք գիրքը միասին պահանջողներին
ՁՐԻ ՈՒՂԱՐԿՈՒՄ ԵՄ ԻԲՐ ՆՈՒԷՐ
երեք հետևեալ գրքերը. 1) «Անկարմատի չալվարը» ծիծաղաշարժ վօդեվիլ չափահասների համար (գինն է 20 կ.), 2) «Րաֆֆի» պատկերով (գ. 10 կ.), 3) «Միևնոյն դագաղում», պատմուածք հայ-թիւրքական կռիւներից, գիւղերի նկարներով, գինն է 7.։

Գրքերի գինը և ճանապարհի ծախս 17 կոպ. անպայման առաջուց ղրկել մարկաներով։ Հասցէս՝ Тифлисъ. Семеновская ул. № 9. Медицинскому фельдшеру А. Г. Есаянцу.
(հ. կ.) 327. 100—34

Վ. ՓԱՓԱԶԵԱՆ
(ՀԱՅ ԳՐՈՂԸ)

Վերադարձած լինելով Թիւրքիայից, կամենում է պաշտօն ունենալ հայ դպրոցներում կամ իբրև ԱՒԱԳ-ՈՒՍՈՒՑԻՉ և կամ իբրև ԴԱՍԱՏՈՒ հետևեալ առարկաների.—Հայոց լեզու, Հայոց պատմութիւն, Հայոց գրականութեան պատմութիւն և Ընդհանուր պատմութիւն։ Պաշտօնավարելու համար որևէ արգելք չունի։

Դիմել նամակով և հաղորդել պայմանները հետևեալ հասցէին.—Нахичевань н./Дону (Донск. обл.) 20-ая Линія, д. № 30. В. Папазьяну. (հ. կ.) 875. 8—2

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ
„Հայ գրողներ“ Ա. մաս, Բ. հրատարակութիւն։
Գինն է՝ կազմած՝ 2 ռ. 25 կ., պօստի ծախսով 2 ռ. 50 կ.։
Դիմել՝ Թիֆլիս, «Գուտտենբերգ» գրախանութ։ (օ. մ.) 876. 3—3

Առևտրի եւ Արդիւնաբերութեան Մինիստր. տնօրէնութեան ներքոյ գտնվող
Տ. Մ. ՓԻԼՕՅԵԱՆԻ
ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԿՈՒՐՍԵՐՈՒՄ
Թիֆլիս, Միխայէլեան պր. 24/4. Տելէֆօն № 976.
Տալիս են երկսեռ անձերին մասնագիտական առևտրական կրթութիւն։
Դասընթացքն աւարտողներին տրվում են ատտեստատներ։

Գործնական պարապմունքները կատարվում են կուրսերում՝ Լօնդօնի Pitman և Պարիզի Pigier դպրոցների ձևով կազմակերպված Muster-Comptoir-ում։ Նիւթերն առնվում են ռէալ կեանքից։ Առարկաներն են. ա) պարտադիր. 1) Հաշւապահութիւն (պարզ, իտալ., գերմ., ֆրանս., ամերիկական, բանկային և գործարանական). 2) Առևտրական թւաբանութիւն. 3) Քաղաքատնտեսութիւն. 4) Օրէնսգիտութիւն (առևտրական իրաւունք, մուրհակի կանոնադրութիւն). 5) Առևտրական թղթակցութիւն. 6) Թւաբանութիւն համրիչի վրա. 7) Վայելչագրութիւն (ամենավատ ձեռքի ուղղումն), արագագրութիւն. բ.) ոչ-պարտադիր. 1) Օտար լեզուներ. 2) Սղագրութիւն. 3) Դակտիլլօգրաֆիա (ռեմինգտօն և ուր.) և 4) Առևտր. թղթակցութիւն օտար լեզուներով։ Պարապմունքները կատարվում են և զատ-զատ։ Ունկնդիրների թւի շատութեան պատճառով բացվում է երկրորդ զուգընթաց բաժանմունք, որը մանաւանդ յարմար է օտարաքաղաքացիների համար։ Ունկնդիրների թիւը սահմանափակված է։ Պարապմունքների սկիզբը սեպտեմբերի 15-ին։ Խնդիրների ընդունելութիւնը առ. ժամը 10—12-ը և երեկ. 4—7-ը։ Ծրագիրը և կանոններն ուղարկվում և տրվում են ձրիաբար կուրսերի շէնքում։ Կուրսերը ֆիրմաներին յանձնարարում են հաշւապահներ, օգնականներ և առևտր. այլ ծառայողներ՝ կուրսերի ընթացաւարտներից և իրանց ընդունակութեամբ աչքի ընկնողներից։ (Ընթացիկ տարում կուրսերն ունեցել են 334 ունկնդիր, որոնցից 67 հոգի իգական սեռից)։

Կուրսերի հիմնադիր՝ Տ. ՓԻԼՕՅԵԱՆ
(ա. օ.) 720. 0—35

ՏԵԽՆԻՔԱԿԱՆ ԳՐԱՍԵՆԵԱԿ
ԻՆԺԵՆԵՐ
Տ. Ա. ԲՈՒԴԱՂԵԱՆԻ
Բագու, Կրասնօվօդսկայա փ. տ. Աւան-Իւզբաշեանցի։ Հեռախօս № № 23-49, 23-50

Առաջարկում է ամբողջ Կովկասի և Պարսկաստանի համար ինչպէս ԴԻԶԵԼ շարժիչներ (մօտօրներ) յայտնի ԿՈԼՈՄԵՆՍԿԻ ընկ. մեքենայագործարանից։

Հօրիզօնական անգլիական շարժիչներ, (մօտօրներ) «ԿՐՕՍԼԷՅ» ընկերութեան մեքենայագործարանից «Դիւրացրած Դիզել» սիստեմի, որ գործ է ածվում նաւթի բոլոր տեսակներով. Նաւթի ծախսն է մի ժամում ամեն մի ույժին ½ ֆունտ կամ 200 գրամմ։

Գազային շարժիչներ, որոնք բանում են թէ բնական և թէ գեներատորային գազով։

Ջրհան և ջրմուղ մեքենաներ (նասօսներ)։

Ջրի շարժիչներ (տուրբինաներ)։

Սառոյց պատրաստող մեքենաներ «ԴԻՆԱՄՕ» ընկ. գործարանից ամեն տեսակի։

Երկրագործական մեքենաներ՝ լօկօմօբիլներ, ցորեն մաքրող մեքենաներ, տրակտօրներ և այլն՝ յայտնի ամենայն ամերիկական «ԿԷՅՍ» (Case) ընկեր. գործարանից։

Մեծ ճանապարհի վրա աշխատելու համար ԱՒՏՕՄՕԲԻԼՆԵՐ նոյն ամերիկական «ԿԷՅՍ» (Case) ընկերութեան գործարանից։

Վերոյիշեալ տեխնիքական գրասենեակը իր վրա է վերցնում զանազան գործարաններ սարքել և գործի գցել իր միջոցներով՝ ինժեներներով և վարպետներով։

Դիմել՝ Баку, Техническая Контора Т. А. БУДАГЯНЦЪ.
Արտասահմանից՝ Bacou (Russie) Bureau Technique T. A. Boudaguian, Ingénieur.
(հ.կ.) 551. 0—32

Ս.-Պետրոգրադի Պետական Կոնսերվատօրիայի Գեղարուեստական Խորհրդի
◆◆ ԴՐՈՒԱՏՄԱՆ ԱՐԺԱՆԱՑԱԾ ◆◆
Հայ դպրոցների III և IV բաժանմունքների
ԵՐԳ-ՁԱՅՆԱԳՐՈՒԹԵԱՆ ԴԱՍԱԳԻՐՔ
Առաջարկում ենք մեր
ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԱՅԲԲԵՆԱՐԱՆԸ
Ա. մաս՝ դիատօնիզմ. ◆ Գինը 35 կոպ.։ ◆ Տպագր. է Բ. մասը։
Դիմել բոլոր հայ գրավաճառներին։
(կ.հ.) 822. 8—7 ՌՈՄԱՆՈՍ ՄԵԼԻՔԵԱՆ, ԱԶԱՏ ՄԱՆՈՒԿԵԱՆ

Типографія канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ. Лорисъ-Меликовская улица, домъ казенный